

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 96-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ ԶԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՅԱՐԳԵՑ ԻՐ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Ապրիլ 24-ին, Հայկական Յեղասպանության 96-րդ տարելիցին առթիվ, աշխարհացրիվ Հայ Ժողովուրդը խոնարհեցավ իր միլիոնավոր նահատակներու յիշատակին առջև: Բազմաթիվ վայրերու մէջ, հայութեան սուգին բաժնեկից եղան նաեւ օտարներ:

Այս տարի եւս յատկանշական էր, Պոլսոյ մէջ կազմակերպուած միջոցառումը՝ թուրք եւ քուրտ մտաւորականներու մասնակցութեամբ:

Միացեալ Նահանգներու նախագահը իր տարեկան խօսքին մէջ խուսափելով «Յեղասպանութիւն» բառի օգտագործումէն, անգամ մը եւս դժգոհութիւն յառաջացուց հայ զանգուածներուն մօտ:

Ինչպէս ամէն տարի, այդ օրը քաղաքամայր Երեւանի մէջ առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելեցին հազարաւորներ՝ յարգանքի տուրք մատուցելու 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:

Ի տարբերութիւն նախորդ տարիներու, Հայաստանի բարձրաստիճան ղեկավարութիւնը Յեղասպանութեան յուշահամալիր այցելեցին վաղ առաւօտեան: Սերժ Սարգսեանին կ'ուղեկցէր Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութեան ղեկավարները, բարձրաստիճան պաշտօնեաներ:

Գարեգին Բ. Կաթողիկոսի զլխաւորութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Օրուայ ընթացքին Յուշահամալիր այցելեցին իշխանամէտ եւ ընդդիմադիր կուսակցութիւններու ու տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներն ու համակիրները:

Ապրիլեան յատուկ միջոցառումներ տեղի ունեցան հայկական գրեթէ բոլոր գաղութներուն մէջ:

## ՄԵԾ ԵՂԵՈՆԻ 96-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՅՈՒՇԱՅՈՒՄՈՒ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Գլխաւոր բանախօս՝ Դոկտ. Ժօզէֆ Քէշիշեան

Երկրորդ տարին ըլլալով, Շաբաթ Ապրիլ 23ին 2011, Փաստինայի Քաղաքապետարանի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 96-րդ տարեդարձի յուշատօնը:

Փաստինայի Հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու միացեալ մարմնի աջակցութեամբ այս միջոցառումը կայացաւ քաղաքապետարանի մուտքի հրապարակին վրայ:

Ամերիկեան բանակի միաւորին կողմէ տեղի ունեցած դրօշակի արարողութեանէն ետք յաջորդաբար երգուեցան ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգերը, կատարողութեամբ Արար Սահակեանի եւ Յարութ Ճղեանի: Բոլոր կղերականներու մասնակցութեամբ «Հայր Մեր» աղօթքէն ետք օրուան հան-

դիսավար Եղիա Մազմանեան ոգեկոչեց 96 տարիներ առաջ յեղասպանութեան զոհ գացած մեր նահատակներու յիշատակը:

Հայ Ժողովուրդի մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերու եւ պահանջատէր նոր սերունդի արդար դատին ի նպաստ ելոյթներով հանդէս եկան Փաստինայի քաղաքապետ Պիլ Պօկարտ, Նահանգային Ծերակոչտի անդամ Քարօլ Լուի, Նահանգային ներկայացուցիչներ Անթօնի Փորթիանթիսո եւ Մայք Կաթօ, Սիերա Մատրէ քաղաքի քաղաքապետ՝ Ճօ Մօլաքա, Փաստինայի Հայկական կազմակերպութիւններու համախմբուածի անունով՝ Խաչիկ (Քրիս) Շահինեան: Հայ դատի եւ իրաւատէր հայ

## ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱՆ ԴԱՐՁԵԱԼ ԽՕՍԵՑԱԻ «ՄԵԾ ԵՂԵՈՆԻ» ՄԱՍԻՆ, ԽՈՒՍԱՓԵԼՈՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՌԵՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպաման Շաբաթ, Ապրիլ 24-ին հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ Հայկական Յիշատակի օրուայ առթիւ եւ ինչպէս նախորդ երկու տարիներուն, խուսափեցաւ «ցեղասպանութիւն» բառէն եւ փոխարէնը օգտագործեց «Մեծ Եղեռն» բառերը:

«Մենք պաշտօնապէս կը չիշատակենք 96 տարի առաջ տեղի ունեցած արբասփելի իրադարձութիւնները, որոնց հետեւանք եղաւ 20-րդ դարու մեծագոյն եղեռնագործութիւններէն մէկը», - ըսուած է Օպամայի խօսքին մէջ, որ տարածեց Սպիտակ տան մամուլի գրասենեակը:

«1915 թուականին մէկուկէս միլիոն հայեր կոտորուեցան կամ մահուան երթ կատարեցին Օսմանեան կայսրութեան մայրամուտին: Ես միշտ յայտարարած եմ 1915 թուականին կատարուածի վերաբերեալ իմ տեսակէտը եւ իմ տեսակէտը, այդ պատմութեան վերաբերեալ չէ փոխուած»:

«Պատմութիւնը մեզ կ'ուսուցանէ, որ մեր պետութիւնները

աւելի հզօր են ու մեր գործը՝ աւելի արդար, երբ մենք պատշաճ կերպով կը ճանչնանք ցաւոտ անցեալը եւ կ'աշխատինք դէպի վաղուայ աւելի լաւ օրը, փոխըմբռնման եւ կամուրջները վերակառուցելու համար: Միացեալ Նահանգները այդ դասը լաւ գիտէ՝ մեր իսկ պատմութեան մութ էջերը»:

«Ես կը քաջալերեմ Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ անհատներու կողմէ կատարուող խիզախ քայլերը՝ նպաստելու իրենց ընդհանուր պատմութիւնը ճանչցող երկխօսութեան», - կ'ըսէ ԱՄՆ-ի նախագահը:

Շարունակելով Օպամա կ'ըսէ, «Յիշատակելով Մեծ Եղեռնը եւ յարգանքի տուրք մատուցելով զոհուածներու յիշատակին, մենք նաեւ վերադառնալով պարտաւորութիւնք սպասովել, որպէսզի նման աղետալի իրադարձութիւնները երբեք չկրկնուին»:

Պարաք Օպամա իր խօսքին մէջ նաեւ կ'ըսէ, որ Ամերիկահայ

## ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ



Ապրիլ 24-ին Պոլսոյ Թաֆնիմ հրապարակին վրայ Թուրքուցարարները պարգած են Նեղոնի գոհ հայ մտաւորականներու նկարները

Ապրիլ 24-ին Պոլսոյ Թաֆնիմ հրապարակին վրայ հաւաքուած մարդիկ ոգեկոչած են Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակը:

Թրքական լրատուամիջոցներուն համաձայն, ոգեկոչման մասնակցած են «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» քրտամէտ կուսակցութեան պատգամաւոր Ուֆուք Ուրաւ, անոր կիներ՝ Ջէյնայ Թանպայ, «Ակօս» շաբաթաթերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինքի եղբայրը՝ Օրհան Տինք, փաստաբան Ֆեթհիյէ Չեթին, Կանճա

Կիւրսոյը, ձենկիզ Աքթար եւ ուրիշներ:

Հրապարակին վրայ հնչած է հայկական երաժշտութիւն եւ ցոյցի բոլոր մասնակիցները ծունկի գալով լուռութեամբ յարգած են 1915 թուականի զոհերու յիշատակը:

Հնչած են ելոյթներ, որոնց ընթացքին անուն առ անուն յիշատակուած են այն բոլոր յայտնի մտաւորականները, որոնք զոհուած են Եղեռնի ընթացքին:

Այս տարուայ ցոյցի մասնա-

### ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻ ՈՂԲԸ

#### ՄԱՐԿ ԵՃԱՆՆԱՆ

Նախօրէին յայտնի գործարար Միխայիլ Բաղդասարովը հարցազրոյց է տուել լրատուամիջոցներից մէկին ու բաւականին ուշագրաւ մտքեր յայտնել: Այդ մտքերն ուշագրաւ են այնքանով, որ նախ՝ Միխայիլ Բաղդասարովը բաւականին անկեղծ է եղել, երկրորդ՝ նա որպէս բիզնեսմէն Հայաստան է «մտել»: Սերժ Սարգսեանի ջանքերով եւ օժանդակութեամբ, կարճ ժամանակում փայլուն յաջողութիւնների է հասել եւ իշխանութիւնների վերաբերմունքից դժգոհելու պատճառ չպէտք է ունենայ, երրորդ՝ նա, ըստ հուստի, մի ամբողջ խաւի (խոշոր բիզնեսի) տեսակէտներն է ներկայացնում: Եւ այսպէս, որո՞ւք են պրն. Բաղդասարովի արտայայտած հիմնական մտքերը:

1. «Իմ ներդրած գումարներից շահույթ չի գալիս»: «Եթէ Հայաստանում մարդը գոյատեւում է աշխատելով գրոյով կամ փոքր պլիւսով, ուրեմն դրսում կը կարողանայ հսկայական շահույթով աշխատել»:

Եզրակացութիւնը միակն է. Հայաստանում հնարաւոր չէ առանց օրէնքներ խախտելու լուրջ բիզնես ծաւալել եւ շահոյթ ստանալ:

2. «Ես Հայաստանում աշխատում եմ յանուն հայրենիքի, որ ձեր հասակակիցները, ովքեր ապրում եւ մեծանում են Հայաստանում, պետութեանը վճարած մեր հարկերի հաշուին կարողանաք ընդլայնուել»:

3. «Նախկինում ես իմ աշխատանքից հաճոյք էի ստանում, հիմա չեմ ստանում, որովհետեւ զանգուածային լրատուամիջոցներն այնքան ամէն ինչ խառնեցին, որ ինձանից սկսեցին յաւելաւոր պահանջել, աւելորդ պարտքեր գրել եւ այլն»:

4. «Ես այսօր ցանկանում եմ անշարժ գոյք ձեռք բերել արտերկրում... Մտադրութիւններ կան եւրոպայում կամ ինչ-որ մի տեղ շարունակել այն բիզնեսը, որը որ արդէն կայ Հայաստանում»:

Հիմա վերլուծենք այս մտքերը: Այն, որ Հայաստանում բիզնեսի համար պայմաններն անաւոր են, հասկանալի է: Փոքր-ինչ տարօրինակ է, որ դժգոհողը իշխանութիւնների ջանքերով վայելող օլիգարխ է, բայց դա ոչինչ: Դժուար է հաւատալ նաեւ, որ նա «գրոյով» է աշխատում, բայց ինդիւսթրիալ օլիգարխների համար «նվազալը» սովորական երեւոյթ է (դա հինաւուրց, գեղեցիկ աննդոյթ է): Մեզ այս ամէնի մէջ յատկապէս մտածելակերպն է հետաքրքրում, մանաւանդ որ օլիգարխների 90 տոկոսը հաստատ նոյն կերպ է մտածում: Մարդը փաստօրէն հայրենասիրութիւնից դրդուած է աշխատում Հայաստանում եւ լրատուամիջոցներից դժգոհում է, որովհետեւ վերջիններս իր այդ վսեմ պահանջները փառաբանելու փոխարէն «ամէն ինչ խառնում են»: Սա ձեզ ոչինչ չի յիշեցնում: Կարէն Կարապետեանն էլ, եթէ յիշում եք, քաղաքացիներից մեկին «համբալ» անուանեց ու յայտարարեց, թէ

իրենք դրսից փող են բերում, որպէսզի նրա նմաններն ուտեն: Այսինքն՝ այս մարդիկ կարծում են, թէ հայ ժողովրդին մեծ լաւութիւն են անում, որ Հայաստանում հսկայական գումարներ են վաստակում ու դրա մի մասը (ինչպիսի խաչտառակութիւն) վճարում որպէս հարկ: Բայց ինդիւսթրիալն է, որ եթէ, ասենք, ունէ մէկը ցորեն է ներմուծում Հայաստան, ու մարդիկ ուտում են այդ հացը, դա դեռ չի նշանակում, որ եթէ այդ մարդը ցորեն է ներկրի՝ ժողովուրդը սովից կտտորուելու է: Ճիշդ հսկառակը՝ նրա փոխարէն մի 10-15 հոգի կը ներկրեն, մրցակցութիւն կը լինի, ու հացը կ'էփանանայ: Նոյնն է նաեւ բենզինի, դիզելային լիքի եւ ցանկացած այլ ապրանքի դէպքում:

Հիմա փորձենք հասկանալ, թէ կոնկրետ ինչից է դժգոհ պրն. Բաղդասարովը (վստահաբար՝ նաեւ շատ ուրիշ գործարարներ): Եթէ նա դժգոհ է հարկային ծանր պայմաններից՝ դրա պատասխանատուն իշխանութիւններն են, ուրեմն ինչո՞ւ է «մոռնաթ գալիս» լրատուամիջոցների վրայ: Ճիշդ է, որովհետեւ լրատուամիջոցներն «ամէն ինչ խառնում են», այսինքն՝ յօդուածներ են գրում, որոնց արդիւնքում իրենից «յաւելաւոր են պահանջում» (ենթադրաբար՝ հարկային մարմինները): Եկէք ճիշդը խօսենք. ունէ մէկը հաւատո՞ւմ է, որ պրն. Բաղդասարովը (կամ մէկ-երկու օլիգարխ) օրէնքով նախատեսուածից աւելի շատ հարկ կը վճարի: Աւելի քիչ՝ գոչ, բայց շատ՝ հաստատ չի վճարի: Եթէ նրանից «յաւելաւոր» են պահանջել, դա կարող է նշանակել միայն մի բան. առաջ նա քիչ հարկեր էր վճարում, լրատուամիջոցները «շուխուր են դրել», դրա հիման վրայ համապատասխան կառոյցները լրացուցիչ գումարներ են պահանջել, նա էլ երեւի վճարել է, բայց այնքան է նեղարտել, որ որոշել է կամացկամաց բիզնէսներ հիմնել «Եւրոպայում կամ ինչ-որ մի տեղ»:

Եզրակացութիւնը միակն է. Հայաստանում հնարաւոր չէ առանց օրէնքներ խախտելու լուրջ բիզնէս ծաւալել եւ շահույթ ստանալ: Հարց է ծագում՝ ինչպէ՞ս կը վարուէր նման իրավիճակում իսկապէս հայրենասէր գործարարը: Կը փորձէր շտկել իրավիճակը (եթէ իսկապէս Հայաստանն իր հայրենիքն է համարում): Իսկ ինչպէ՞ս կը վարուէր սովորական, չարքային «փող չիողող»: Մի քիչ կը փնթփնթար ու կը գնար աւելի փարթաւ արօտավայր փնտռելու: Միանգամից ասենք՝ Հայաստանի խոշոր գործարարների 90 տոկոսն այսօր հենց դրանով էլ զբաղուած է: Դրա համար, ի դէպ, գործարարներին մեղադրել պէտք չէ, նրանց պէտք է ընդամենը արգելել հայրենասիրական ծառեր արտասանել: Իսկ մեղադրել պէտք է իշխանութիւններին: Բայց դա էլ, մեր մէջ ասած, մի քիչ վտանգաւոր է. մէկ էլ տեսար՝ արտասահմանում անշարժ գոյք ձեռք բերելու փող չմնաց: Այնպէս որ, միակ ելքը մնում է հասարակութեան վրայ «մոռնաթ գալը», ախր հէ՞չ չեն գնահատում հայրենասէր օլիգարխներին:

«ՉՈՐՈՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

### ԵՐԲ ԿԸ ՃԱՆԱԶՈՒՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

#### ՅԱԿՈՔ ԲԱՂԱՆԱՆ

Դժուար է ասել, թէ հայութիւնը ինչքան ջանք է թափել Օսմանեան Թուրքիայում տեղի ունեցած ողբերգութիւնն աշխարհին ապացուցելու համար, որպէսզի աշխարհը դա ճանաչի որպէս ցեղասպանութիւն: Բայց, դատելով ներկայում առկայ արդիւնքից, կարծես թէ ակնյայտ է, որ այդ ջանքի եւ արդիւնքի յարաբերակցութիւն գործակիցը այդքան էլ բարձր չէ:

Մինչեւ որոշակի պահ հայութեան ջանքն արդիւնք տուել է, ցեղասպանութեան հարցը չայտնուել է միջազգային քաղաքական

Առանց հզոր պետական գործիքի, առանց արդիական պետական բազայի, հնարաւոր չէ ճեղքել այն աշխարհաքաղաքական բնական խուփը, որ առաջանում եմ ճանաչման ճանապարհին

նութեան շրջանառութեան մէջ, անգամ Թուրքիայում են արդէն տեղի ունենում երեւոյթներ, որոնք դժուար էր պատկերացնել մի քանի տարի առաջ: Բայց նկատելի է, որ ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցում կայ նոր ճեղքման կարիք, ճանաչման գործընթացին նոր թափ հաղորդելու կարիք: Աւելին, կարիք կայ, որ մենք այդ թափը հաղորդենք, ոչ թէ Ամերիկային, կամ Ֆրանսիան, կամ այլ պետութիւն:

Մինչդեռ այժմ կարծես թէ ակնյայտ է, որ չնայած համահայկական ջանքերին, ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի դինամիկան իրականում պայմանաւորուած է ոչ թէ մեզանով, այլ Ամերիկայով, Եւրոպայով, Թուրքիայով: Հետեւաբար այստեղ կայ ինդիւսթրիալ ճանաչման գործընթացը մեր վերահսկողութեան տակ վերադարձնելու խնդիր: Այն չափազանց բարդ է իհարկէ, բայց միանգամայն լուծելի: Պարզապէս դրա համար անհրաժեշտ է լուծել մէկ այլ խնդիր՝ արդիական, մրցունակ, առողջ պետութիւն կազմաւորելու խնդիրը:

Կեանքը ցոյց տուեց, որ քանի դեռ համաշխարհային ասպարէզում ինդիւսթրիալ հետապնդելու համար չունենա այդ գործիքը, յաջողութիւնները կարող են խիստ յարաբերական լինել, իսկ աւելի յաճախ՝ այլող յաջողութիւնները կարող են պատահաբար ընկալել որպէս քոնք, եւ միայն երբ դրանից այլք կոնկրետ արդիւնք կը քաղեն, իսկ դու կը մնաս ոչ տաք, ոչ սառը, կը հասկանաս, որ յաջողութիւնը քոնք չէր:

Ուրեմն, ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործում բեկում առաջացնելու համար առանցքային հարցն այն է, թէ որպէս գործիք մենք ինչ պետութիւն ունենք այսօր: Մեր ունեցած պետութիւնը հեռու է արդիական եւ մրցունակ լինելուց, քանի որ դրա համար պետութեան ներքին կեանքը պէտք է արդիականացուի եւ դրուի ազատ, արդար, օրինական, սահմանադրական մրցակցութեան հիմքի վրայ, սեղաւորուի եւ առաջնորդուի այդ սկզբունքներով: Կը հասնենք դրան՝ ուրեմն կը հասնենք նաեւ լրջագոյն ճեղքման

ցեղասպանութեան ճանաչման հարցում, չենք հասնի՝ ուրեմն նոյնիսկ ճանաչման գործում արձանագրուող յաջողութիւններն իրականում կը լինեն թուացեալ, եւ դրանց առարկայական արդիւնքը կը ճաշակեն նրանք, ովքեր ներկայում իրենց պետական մրցունակութեամբ տնօրինում են մեր անմրցունակութեան հետեւանքը՝ ցեղասպանութեան հարցը շահարկում են բացառապէս իրենց պետական շահերին համահունչ:

Ընդ որում, այստեղ ինդիւսթրիալ նաեւ Սփիւռքի մասով: Գնահատելի է հայերի ցեղասպանութեան ճանաչման միջազգային գործընթացի համար սփիւռքի հայկական կազմակերպութիւնների գործադրած ջանքը: Բայց, այդ կազմակերպութիւնների համար էլ թերեւս պէտք է արդէն պարզ լինի, որ առանց հզոր պետական գործիքի, առանց արդիական պետական բազայի, հնարաւոր չէ ճեղքել այն աշխարհաքաղաքական բնական խուփը, որ առաջանում են ճանաչման ճանապարհին: Հետեւաբար, Սփիւռքն էլ պէտք է իր համար առաջնային խնդիր դիտի Հայաստանի արդիականացումը, Հայաստանի մրցունակութեան բարձրացումը:

Այսինքն, եթէ նոյնիսկ Սփիւռքը համարում է, որ իր գլխաւոր խնդիրը ցեղասպանութեան ճանաչման հարցում առաջին դիրքերում լինելն է, ապա այդ դէպքում էլ նրա առաջնային անելիքը հենց Հայաստանի արդիականացմանը նպաստելն է, այդ ուղղութեամբ ջանքեր անելը, որովհետեւ սփիւռքահայ կազմակերպութիւնները հազիւ թէ ճանաչման համար աւելի արդիւնաւէտ քայլ կարողանան կատարել, քան Հայաստանն իրաւական, օրինական, ազատ եւ արդար պետութիւն դարձնելուն օժանդակելը:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԼԵՏՄԵԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՄՄՆԻՍՏԻԿԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

ՐԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ «ՄԱՐՏԻ 1»-Ի ԲԱՑԱՅԱՅՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ «ՆՈՐ ԹԱՓ» Է ԱԿՆԿԱԼՈՒՄ



Մարտ 1-ի օրը Երևանի մէջ

Նախագահական պալատում դատաիրաւական բարեփոխումների շուրջ հրաւիրուած խորհրդակցութեան ժամանակ Սերժ Սարգսեանն անդրադարձել է 2008 թուականի Մարտի մէկի դէպքերի աւիթով յարուցուած քրէական գործի ընթացքին:

«Բազմիցս ասել եմ եւ հիմա էլ կրկնում եմ, որ սպասելիքները շատ են եւ, առաջին հերթին, խօսքս վերաբերում է Մարտի մէկի դէպքերին: Ակնկալում եմ նոր թափ եւ ընդգծուած ակտիւացումն նշուած դէպքերի բացայայտման հարցում», - նախագահի մամուլի գրասենեակի տարածած հարդրադարձութեան համաձայն, յայտարարել է Սերժ Սարգսեանը:

Սերժ Սարգսեանն ընդգծել է, որ հարցը անձնապէս իր համար «շատ կարեւոր» է. - «Ձեզ ուղղուած իմ պահանջն է՝ կրկին եւ առաւել մանրակրկիտ անդրադառնալ նոյնիսկ այն հանգամանքներին, որտեղ ըստ ձեզ որեւէ նոր բան չի կարող լինել: Փորձէք այդ դէպքերի բացայայտման նոր ուղիներ գտնել: Արդէն տեւական ժամանակ է անցել, միգուցէ, մարդիկ կան, ովքեր ականատես են եղել եւ այն ժամանակ չէին ուզում համագործակցել իրաւապահ մարմինների հետ, իսկ հիմա այլ մօտեցումներ ունեն: Սա էլ է շատ հնարաւոր»:

«Մարտի 1»-ի սպանութիւնները բացայայտելու պատրաստակամութեան վերաբերեալ պաշտօնական հաւաստիացումը այն երեք հիմնական պահանջներից մէկն է, որի մասին խօսել էր ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը Ապրիլի 8-ի ընդդիմութեան հանրահաւաքում: Սա նաեւ մի խնդիր է, որը յիշատակում է Հայաստանի վերաբերեալ ԵՄԻՄԻ-ի, ինչպէս նաեւ միջազգային այլ կառույցների եւ Հայաստանի գործընկեր պետութիւնների պատրաստած զեկոյցներում:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Հայ ազգային կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանն ասաց, որ իշխանութեան քայլը ազդակ է, որ կը կատարուեն նաեւ ընդդիմութեան միւս երկու պահանջները:

Սեփական կենսամակարդակին 7-ից բարձր միաւոր է ստուել Հայաստանում հարցուածների 12 տոկոսը: Նրանք, ըստ Gallup-ի, կայուն եւ բարգաւաճ կեանք են վարում, դրական ակնկալիքներ ունեն ապագայից, բաւական հագուուղէպ են բողոքում առողջութիւնից եւ, որպէս կանոն, ապրում են երջանկութեան մէջ:

Ընդ որում, Հայաստանում, ըստ հարցումների, բարեկեցիկ կեանք վարողների թիւը 2 տոկոս

ՕՍԲՈՒԴՍՄԵՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԻՋՆՈՐԴ ԴԱՌՆԱԼ ԻՇԽԱՆՈՂ ԿՈՎԼԻՑԻԱՅԻ ԵՒ ՅԱԿ-Ի ՄԻՋԵՒ

Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպան կարէն Անդրէասեանը ցանկութիւն է յայտնել միջնորդ դառնալ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) եւ իշխող կոալիցիայի միջեւ՝ երկխօսութիւն եւ առողջ համագործակցութեան սկսելու գործում:

Երկուշաբթի, Ապրիլ 25-ին Մարդու իրաւունքների պաշտպանի պաշտօնական կայքում տեղադրուած յայտարարութիւնում նորընտիր օմբուդսմէնը ասում է, թէ կոնկրետ քայլեր նախաձեռնելու վճռականութեամբ՝ այս շաբաթ իր առաջարկը գրաւոր կ'ուղարկի խորհրդարանական իշխող կոալիցիային եւ ՀԱԿ-ին:

Պաշտպանը իր յայտարարութեան մէջ ֆիքսել է կողմերի, իր գնահատմամբ, ամենահակասական եօթ դիրքորոշումները, որոնք հիմնականում առնչուում են 2008 թուականի նախագահական ընտրութիւնների արդիւնքներին, յետընտրական իրադարձութիւններին եւ դրանց հետեւանքներին:

Անդրէասեանը ցանկանում է մերձեցնել իշխանութեան եւ ընդդիմութեան այս հակասական դիրքորոշումները եւ կողմերի օգնութեամբ գտնել հնարաւոր լուծումները: Օմբուդսմէնը կարծում է, որ այս առաքելութեան տեսանկիւնից ինքն ունի մի քանի առաւելութիւն: Ընդգծելով, որ Սահմանադրութեամբ օմբուդսմէնին միջնորդի գործառնոյթ է տրուած՝ կարէն Անդրէասեանը գրում է. - «Իմ տեւական իրաւաբանական գործունէութեան ընթացքում յաճախ եմ հաշտեցրել ծայրայեղ հակասական դիրքորոշումներ, եւ վերջապէս՝ ես նոր եմ քաղաքական գործընթացներում ու բաւական երիտասարդ, որպէսզի անկեղծ հաւատամ, որ եղբայրասիրութեան ու համերաշխութեան գաղափարները չեն վերացել մեր ոչ մի քաղաքական ուժի գաղափարախօսութիւնից, եւ որ անհնարը հնարաւոր են դարձնում երիտասարդ իղէալիստները, մասնազէտ պրագմա-



Մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեան

տիկները եւ մարդասէրները»:

Օմբուդսմէնի այս ցանկութիւնը Հանրապետական պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը ընդունելի է համարում, սակայն նրա համար դրա իրականացման մեխանիզմներն են անհասկանալի:

«Յաջորդ քայլը ո՞րն է լինելու: Եթէ մենք ասենք՝ այո, կողմ ենք, կամ՝ ոչ, կողմ չենք, Մարդու իրաւունքների պաշտպանը ի՞նչ է անելու: Մենք պէտք է ի՞նչ որ թուղթ ստորագրենք, որ ցանկանում ենք, որ ինքը միջնորդ հանդիսանայ», - հարցնում է պատգամաւորը:

Ընդդիմադիր ՀԱԿ-ը, արձագանքելով օմբուդսմէնին այս առաջարկին յայտարարութիւն է տարածել, որում ասում է, թէ մարդու իրաւունքների պաշտպանը սխալ է հասկացել երկխօսութեան իմաստը, քանի որ խօսքը վերաբերում է ոչ թէ ՀԱԿ-ի եւ խորհրդարանական կոալիցիայի, այլ «ՀԱԿ-ի եւ գործադիր իշխանութեան միջեւ կայանալիք երկխօսութեանը»:

«Իշխանութեան եւ ՀԱԿ-ի միջեւ ուղղակի երկխօսութեան ձեւաչափում ո՛չ ներքին, ո՛չ արտաքին միջնորդի կարիք չկայ: Իսկ եթէ իշխանութիւնը նպատակաւորմար համարի բանակցութիւնների ընթացքում իր պատուիրակութեան կազմում ընդգրկել Մարդու իրաւունքների պաշտպանին, ՀԱԿ-ը ինդիք չունի», - ասուած է յայտարարութիւնում:

ՅԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԿԵՍԻՑ ԱԲԵԼԻՆ ՊԱՅԲԱՐՈՒՄ Է ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ՅԱՄԱՐ

Հայաստանում բնակչութեան 12 տոկոսը վստահ է, որ իր կեանքը բարգաւաճում է, մինչդեռ 54 տոկոսը պայքարում է գոյատեւման համար, իսկ 34 տոկոսը՝ տառապում: Յամենայն դէպս, այդ են վկայում հեղինակաւոր Gallup հետազոտական կենտրոնի անցկացրած վերջին ուսումնասիրութիւնները:

Աշխարհի 124 երկրում կատարուած այդ հետազոտութեան նպատակն է պարզել՝ ինչպէս են իրենց կեանքը գնահատում տեղաբնակները եւ ինչ են ակնկալում առաջիկայ հինգ տարիների ընթացքում:

Պատկերը ստանալու համար իւրաքանչիւր մասնակցի առաջարկուել է գնահատել իր աւօրեայ կեանքը 10-բալլանոց համակարգով:

Հայաստանում, ըստ այդմ, մեծամասնութիւնը՝ 50 տոկոսից աւելին, սեփական կենսամակարդակը գնահատել է 4-7 բալլի սահմաններում:

Բնորոշելով այս խումբը՝ Gallup-ը փաստում է. - «Այս մարդիկ վարում են չափաւոր կամ անկայուն կեանք, զուսպ կամ բացասական կարծիք ունեն իրենց

ներկայի եւ ապագայի վերաբերեալ, նրանք կամ որոշակի խնդիրների են բախուած ներկայումս, կամ կարծում են, որ դրանք կ'ունանան առաջիկայում, մտահոգուում են փողի պակասից եւ, որպէս կանոն, ծխում»:

Առաւել վատ է իրավիճակը երրորդ՝ տառապողների խմբում, որտեղ ընդգրկուել են Հայաստանում հարցուածների մօտ մէկ երրորդը: Ըստ այդմ, Հայաստանում իւրաքանչիւր երեքից մէկը բացասական ակնկալիք ունի ապագայ հինգ տարիներից, որպէս կանոն՝ խնդիրներ ունի հանապազօրեայ հաց վաստակելու, օթեւանի, առողջութեան ու դրա պահպանման հետ:

Սեփական կենսամակարդակին 7-ից բարձր միաւոր է ստուել Հայաստանում հարցուածների 12 տոկոսը: Նրանք, ըստ Gallup-ի, կայուն եւ բարգաւաճ կեանք են վարում, դրական ակնկալիքներ ունեն ապագայից, բաւական հագուուղէպ են բողոքում առողջութիւնից եւ, որպէս կանոն, ապրում են երջանկութեան մէջ:

Ընդ որում, Հայաստանում, ըստ հարցումների, բարեկեցիկ կեանք վարողների թիւը 2 տոկոս

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆՆ ԸՆԴԳՐԿՈՒԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով փոփոխութիւն է կատարուել ՀՀ նախագահի 2008 թուականի Մայիսի 4-ի «Ազգային անվտանգութեան խորհրդի կազմը հաստատելու մասին» ՆՉ-107-Ա հրամանագրում:

Նախագահի մամուլի ծառայութեան տարածած հարդրադարձութեան համաձայն, «Ազգային անվտանգութեան խորհրդի կազմը հաստատելու մասին» ՆՉ-107-Ա հրամանագրով հաստատուած յաւելուածը լրացուել է հետեւեալ բովանդակութեամբ՝ «Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան ղեկավար»:

Ըստ այդմ՝ «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան ղեկա-

սով աւելի է, քան Ադրբեջանում եւ Վրաստանում:

Հարեւան երկրներում, սակայն, առաւել շատ են միջին՝ գոյատեւող խմբի ներկայացուցիչները եւ աւելի քիչ՝ տառապողները:

Ընդհանուր առմամբ, բարե-

վար Գագիկ Ծառուկեանը ընդգրկուած է ԱԱԽ կազմում:

Սերժ Սարգսեանի գլխաւորած Ազգային անվտանգութեան խորհրդի կազմում ի պաշտօնէ ընդգրկուած են Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղարը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, Սահմանադրական դատարանի նախագահը, փոխվարչապետը, պաշտպանութեան նախարարը, արտգործնախարարը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, գլխաւոր դատախազը, ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէնը, ոստիկանապետը եւ Զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետը:

Խորհրդարանական որեւէ այլ խմբակցութեան ղեկավար ԱԱԽ-ի կազմում ընդգրկուած չէ:

կեցութեան առումով առաջին հորիզոնականներում են Դանիան, Շուեդիան եւ Կանադան, որտեղ սեփական կեանքը բարգաւաճ է գնահատում բնակչութեան 70 տոկոսը եւ աւելին, մինչդեռ տառապողների թիւը հասնում է 1 տոկոսի:

**ԼՈՒՐԵՐ**

**ՍՏԵՂԾՈՒԵԼ Է ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով, Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացը խթանելու ու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգելու նպատակով, ստեղծուել է պետական յանձնաժողով եւ հաստատուել է յանձնաժողովի կազմը: Յանձնաժողովի նախագահը ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանն է:

Ինչպէս Արմենպրեսին տեղեկացրին ՀՀ նախագահի մամուլի գրասենեակից, հանրապետութեան ղեկավարի հրամանագրով, մի շարք յանձնարարականներ են տրուել ՀՀ նախարարութիւններին, գերատեսչութիւններին, ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններին, ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիային:

Հրամանագրի համաձայն, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի անդրանիկ նիստը կը հրաւիրուի 2011 թուականի Մայիսի 30-ին՝ Երեւանում:

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի կազմը Սերժ ՍԱՐԳՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ (Յանձնաժողովի նախագահ)

Բակօ ՍԱՀԱԿԵԱՆ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս

Ներսէս Պետրոս ԺԺ Հայ Կաթողիկէ եկեղեցու պատրիարք

Մկրտիչ ՄԵԼՔՈՆԵԱՆ Հայ Աւետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ

Հովիկ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ

Տիգրան ՍԱՐԳՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ

Գագիկ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական դատարանի նախագահ

Էդուարդ ՆԱԼԲԱՆԴԻԱՆ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար

Հրայր ԹՈՎՄԱՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարար

Արմէն ԱՇՈՏԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարար

Յասմիկ ՊՕՂՈՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան մշակույթի նախարար

Հրանոյշ ՅԱԿՈԲԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարար

Վաչէ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան ֆինանսների նախարար

Վիգէն ՍԱՐԳՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Վազգէն ՄԱՆՈՒԿԵԱՆ Հանրային խորհրդի նախագահ

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան գիտութիւնների ազգային ակադեմիայի նախագահ

Կարէն ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Երեւանի քաղաքապետ

Ալեքսան ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ Հանրային հեռուստա-ռադիոընկերութեան խորհրդի նախագահ

Գագիկ ԾԱՌՈՒԿԵԱՆ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ

Արթուր ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ

Րաֆֆի ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ

Հրանդ ՄԱՐԳԱՐԵԱՆ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բիւրոյի ներկայացուցիչ

Կիրո ՄԱՆՈՒԵԱՆ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի ղեկավար

Մայք ԽԱՐԱՊԵԱՆ Ռամկավար Ազատական կուսակցութեան կենտրոնական վարչութեան ատենապետ

Յակոբ ԱԻԵՏԻՔԵԱՆ Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցութեան ատենապետ

Սեդրակ ԱՃԵՄԵԱՆ Հնչակեան Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան ատենապետ

Պերճ ՍԵՂՈՒԿԵԱՆ Հայ բարեգործական ընդհանուր միութեան նախագահ

Արա ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Ռուսաստանի հայերի միութեան նախագահ

Հրայր ՅՈՎՆԱՆԵԱՆ Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչ

Արամ ՄԻՄՈՆԵԱՆ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր

Արա ՍԱՂԱԹԷԼԵԱՆ «Հանրային կապերի եւ տեղեկատուութեան կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրէն

Հայկ ԴԵՄՈՆԵԱՆ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն (յանձնաժողովի քարտուղար):

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՅԱՅԱԶԳԻ ԶԻՆՈՒՈՐԻՆ  
ՍՊԱՆՆԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ ԶԻ ԿԱԼԱՆԱԴՈՐՈՒԵԼ**

Հայազգի գինուոր Սեւակ Շահին Բալըքչըն մահացել է իր ծառայակցի կողմից ինզնաձիգից պատահաբար արձակուած գնդակից ստացած ծանր մարմնական վնասուածքի հետեւանքով: Այս մասին, ինչպէս տեղեկացնում է թուրքական «Դոդան» գործակալութիւնը, ասուած է թուրք-իայի Ժանդարմերիայի գլխաւոր հրամանատարութեան կողմից Սեւակի մահուան կապակցութեամբ արուած յայտարարութիւնում:



«Ժանդարմերիայի 7 գինուորներ, այդ թւում Սեւակ Շահին Բալըքչըն, 2011թ. Ապրիլի 24-ին առաջադրանք էին ստացել վերանորոգել Բաթմանի նահանգի Քոզլուք շրջանի Գիւմուշորգուի ժանդարմերիայի տեղամասից 40-50մ հեռավորութեան վրայ գտնուող յորգառատ տեղումների հետեւանքով վնասուած դիրքային փշալարերը: Զինուորների անվտանգութիւնն ապահովելու նպատակով նրանց կցուել են ժանդարմերիայի երկու գինուորներ: Նոյն օրը ժամը 11:15-ի սահմաններում գինուորացիների անվտանգութիւնն ապահովող գինուորներից մէկը, ով, ի դէպ, մահացած Սեւակ Շահին Բալըքչընի մօտ ընկերներից էր, իրեն կցուած ինզնաձիգով խաղալիս, պատահաբար կրակել է աշխատանքներ իրականացնող գինուորների ուղղութեամբ, ինչի հետեւանքով որովայնի շրջանում ծանր մարմնական վնասուածք է ստացել Սեւակ Շահին

Բալըքչըն: Վիրաւոր գինուորը դէպքի վայրից անմիջապէս տեղափոխուել է հիւանդանոց: Սակայն բժշկներին չի յաջողուել փրկել նրա կեանքը: Առանց չապաղելու դէպքի մասին հաղորդուել է ռազմական դատախազութեանը: Քոզլուքի դատախազութեան կողմից դէպքի վայրում իրականացուել է հետաքննութիւն, որից յետոյ դատարանը որոշում է կայացրել Սեւակ Շահին Բալըքչընի պատահաբար սպանած ժանդարմերիայի գինուորի նկատմամբ որպէս խափանման միջոց չսահմանել կալանքը: Նա դատաւարութեան ժամանակ կը գտնուի ազատութեան մէջ: Մահացած գինուորի ընտանիքի անդամների հետ համաձայնութիւն է ձեռք բերուել, ըստ որի՝ վերջիններս այցելելու են ժանդարմերիայի տեղամաս, որտեղ մահացել է իրենց որդին եւ հանդիպելու են հրամանատարական կազմի եւ Սեւակ Շահին Բալըքչընի գինուորացիների հետ»,- նշուած է յայտարարութիւնում:

**«ՅԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐՍՈՒԱԾ ԳԱՐՈՒՆԸ» ՖԻԼՄԸ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ**

Երեքշաբթի, Ապրիլ 26-ին Երեւանի լրագրողական ակումբներից մէկում տեղի ունեցաւ հրապարակախօս Տիգրան Պասկեւիչեանի «Հայաստանի կորսուած գարունը» ֆիլմի շնորհանդէսը: Փաստավաւերագրական այս ֆիլմը պատմում է 2008 թուականի նախագահական ընտրութիւնների, նախընտրական շրջանի, ինչպէս նաեւ ընտրութիւններին յաջորդած Մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւնների մասին: Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին Տիգրան Պասկեւիչեանը նշեց, որ Մարտի 1-ի թեման այսօր Հայաստանի համար ամենակարեւոր եւ ամենահրատապ ինդիւրներից մէկն է, եւ իրենց ֆիլմի գլխաւոր

մեսիջը այն է, որ «Մարտի 1-ը պէտք է բացայայտուի ամբողջութեամբ»: «Այսինքն՝ եթէ ֆիլմը ամբողջութեամբ նայէք, կը տեսնէք, որ բացայայտելու շատ բան էլ չկայ: Ամէն ինչ շատ պարզ է: Ուղղակի պէտք է լինի քաղաքական կամք եւ պէտք է լինի իրաւապահ մարմինների մօտ պրոֆեսիոնալ պատասխանատուութիւն», - ասաց ֆիլմի հեղինակը՝ տեղեկացնելով նաեւ, որ ֆիլմը տեսասկաւառակների միջոցով բաժանելու են Հայաստանի գործող ղեկավարութեանը, նաեւ՝ Ռոբերտ Քոչարեանին, Վարդան Օսկանեանին եւ այն բոլոր անձանց, ովքեր առնչութիւն են ունեցել Մարտի 1-ի իրադարձութիւններին:

**ԵՐԵՒԱՆԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ ԱՐՏՕՆԵՑ ՅԱԿԻ  
ՅԱՆՐԱՅԱԲԱՔԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

2008 թուականի յետընտրական իրադարձութիւններից յետոյ առաջին անգամ Երեւանի քաղաքապետարանը ի գիտութիւն է ընդունել ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի Ապրիլի 28-ի հանրահաւաքը Ազատութեան հրապարակում: Հայ ազգային կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում քաղաքապետարանի որոշումը գնահատեց որպէս ընդդիմութեան երկրորդ պահանջի բաւարարում: «Մենք երեք պահանջ էինք ներկայացրել, այսպէս ասած՝ մի-

նիմալ փաթէթ, որի կատարման դէպքում Ապրիլի 28-ը կարող է դառնալ երկխօսութեան սկզբնաւորման օր, կամ, եթէ չի կատարուում, վերջնական ջրբաժանի օր, ինչպէս Տէր-Պետրոսեանը նշել էր», - ասաց Զուրաբեանը: - «Այդ երեք պահանջներից մէկը մի քանի օր առաջ էր կատարուել. դա պաշտօնական հաւաստագրումն էր Մարտի 1-ի 10 սպանութիւնների բացայայտման պատրաստակամութեան մասին, երկրորդն էլ Ազատութեան հրապարակում հանրահաւաքների համար արտօնուած կարգավիճակ ստանալու պահանջն էր»:

**Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

### ՄԵԾ ԵՂԵՈՆԻ 96-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԴԷՍ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ

#### Շարունակում է 1-ին

ժողովուրդի դիմակալած այժմեական հարցերու մասին խորիմաստ ելույթով մը հանդէս եկաւ օրուան գլխաւոր բանախօս՝ Դոկտ. Ժօզէֆ Քէլչեան:

Յեղասպանութեան ճանաչման եւ հայ ժողովուրդին զօրակցու-



Եղիա Մազմանեան

թեան յուշագիր նամակներ ու հռչակագիրներ կարդացին Ռաֆֆի Նազարեան (Պարպարա Պաքաբլի ներկայացուցիչ), Գոնկրէսական Ատամ Շիֆի ներկայացուցիչ՝ Թերսա Հայնձ, Լոս Անճելըսի քաղաքային



Մայք Կաթօ


Խորհուրդի անդամ Մայք Անթոնովիչի ներկայացուցիչ Իթա Հաճիմանուկեան:

Օրուան չատուկ հայրենասիրական երգերով հանդէս եկան Սալբի Քէլչեան եւ Արա Սահակեան:

Սոյն յիշատակի հանդիսու-



Խաչիկ (Գրիս) Շահինեան



Քարօլ Լու



Անթօնի Փորթանթինօ

թիւնն աւարտեցաւ հոգեհանգստեան արարողութեամբ:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՆՇԵՑ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐԶ



Չորեքշաբթի Ապրիլ 20ին Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդը, նախորդ տարիներու նման նշեց Մեծ Եղեռնի տարեդարձը:

Այս առթիւ կազմակերպուած էր չատուկ յուշահանդէս ընդունելու-

Շար.բ էջ 17

### ՄԻԱՑԵԱԼ ԶԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՑՈՅՑԸ

Նախորդ տարիներու նման այս տարի եւս Ապրիլ 24ին, 2011, Հոլիվուտի «Փոքրիկ Հայաստան» (Little Armenia) թաղամասէն սկսաւ Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպութեան ցոյցը: Հայ քաղաքական եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու առաջնորդութեամբ սոյն բազմահազար հայորդիներու ցոյցն սկսաւ առաւօտեան ժամը 9:30ին: Անոնք

ամերիկեան եւ հայկական դրօշներով եւ ցեղասպանութիւնը դատապարտող պահանջատիրական կարգախօսներով, իրենց խաղաղ երթը շարունակեցին երկու ժամ:

Ջատկուան նախօրէին Ապրիլ 23ի գիշերը Միացեալ Հայ Երիտասարդները գիշերային հսկում կազմակերպած էին Կլենտէյլի «Սիվիլ» հանդիսասարահի հրապարակը:

### ՄՈՆԹՊԵԼԼՈՅԻ ՆԱԶԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՕՏ

Ջատկուան նախօրէին, Շաբաթ Ապրիլի 23ին, 2011, կ.ա. ժամը 11:00ին Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ 20րդ դարու առաջին ցեղասպանութեան 96-րդ տարեդարձին նուիրուած ժողովրդային յուշահանդէսը:

Շուրջ հազար հոգիներ ներկայ գտնուեցաւ հայկական ցեղասպանութեան ոգեկոչման միացեալ Մարմնի կազմակերպած հաւաքին, որուն ներկայ էին նաեւ Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Վիարակոսա, Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ այլ քաղաքական ու կրօնական անձնաւորութիւններ:

Հայ ժողովուրդի արդար դատին ի նպաստ զօրակցական ելույթներով հանդէս եկան քաղաքապետ Անթոնիօ Վիարակոսա, Յարութ Սասունեան եւ ուրիշներ: Օրուան գլխաւոր բանախօսն էր արժանի նահայ յայտնի իրաւաբան եւ քա-

ղաքական գործիչ Ֆետերիքօ Հայրապետեան: Ան թոռնիկն է Եղեռնին վերապրած Գրիգոր Հայրապետեանի, որուն գերդաստանի 50 անդամները կորսուած են թուրքիոյ կողմէ գործադրուած ցեղասպանութեան օրերուն: Ֆ. Հայրապետեան իր ելույթին մէջ անդրադարձաւ թէ ինչպէս իր ճիգերով Արժանի յոյժներու անձերու ճակատագիրը ճշդեղու մասին: Արդարեւ, տասը տարիներու հետապնդումէ ետք իր բացած դատը յաջողութեամբ պսակուած է: Դատարանի վճիռը կ'ըսէ հետեւեալը. «Թրքական պետութիւնը ցեղասպանութիւն իրականացուցած է հայ ժողովուրդի նկատմամբ 1915-1923 թուականներուն, սպաննելով մէկուկէս միլիոն հայեր»:

Սոյն միջոցառումը աւարտեցաւ հոգեհանգստեան արարողութեամբ, մասնակցութեամբ ներկայ հոգեւորականներուն:

### ՄԻՋ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶՈԳԵԶԱՆԳԻՍ

Մեծ Եղեռնի 96-րդ տարեդարձին առիթով Երկուշաբթի 25 Ապրիլին, 2011, Պըրպէնքի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ Մայր եկե-

ղեցուց մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ եւ հոգեհան-

Շար.բ էջ 17

### ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՄՈՆԹՊԵԼԼՈՅԻ ԵՂԵՂՈՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ



Կիրակի, Ապրիլ 24-ի կէսօրէն ետք, Մոնթեպելլոյի Եղեռնի յուշարձան այցելեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութիւնը:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամները եւ Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող մշակութային, մարզական եւ երիտասարդական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Հայկական Ցեղասպանութեան 96-ամեակի առթիւ, Հնչակեան պատուիրակութիւնը ծաղիկեպսակ զետեղեց Յուշարձանին, խոնարհելով մեր զոհերու յիշատակին առջեւ:

# ԼԻԲԱՆԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱԲԱՔԱԲԱՐ ՈԳԵԿՈՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 96-ԱՄԵԱԿԸ



Լիբանանահայու թիվերը Կիրակի, 24 Ապրիլ 2011-ին, երեկոցան ժամը 8:00-ին, Անթիլիասի մայրավանքին մէջ հաւաքաբար ոգեկոչեց Հայոց Ցեղասպանութեան 96-ամեակը:

Ոգեկոչման ձեռնարկին ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, համայնքապետեր, հայ քաղաքական երեք կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան, Լիբանանի բարեջան առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան, պետական նախարար Ժան Օղասապեան, պետական երեսփոխաններ՝ ընկ. Սեպուհ Գալփաքեան, Մեթր Սերժ Թուրսարգիսեան, Յակոբ Բազրատունի, Արթուր Նազարեան եւ բազմահազար հայորդիներ:

Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին հոգեհանգստեան արարողութենէն եւ լիբանանահայ շեփորախումբերու կատարողութեամբ Լիբանանի ու Հայաստանի քայլերգներուն ունկնդրութենէն ետք տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում, ապա հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Աստղիկ Ճամպուլեան-Գանտահարեան: Ան նշեց, որ Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Թուրքիան սկսած է իր ներկայութիւնը գօրացնել Միջին Արեւելքի մէջ, եւ այս հոսանքին դէմ պէտք է արթուն ու պահանջատէր դիրքերէն շարունակել մեր նահատակներուն դատը՝ համայն հայութեան դատը: Ճամպուլեան-Գանտահարեան ըսաւ, որ այս հաւաքը առիթ մըն է վերանորոգելու ուխտը, որպէսզի կարենանք ապագային միասնաբար բարձրացնել ամբողջական յաղթանակի դրօշը:

Օրուան առաջին պատգամը Ռամկավար Ազատական կուսակցութեան անունով արտասանեց տրքթ. Վազգէն Ժամկոչեան, որ նշեց, թէ 96 տարի անցած է նենգամտութիւն ծրարուած ցեղաս-

պանութենէն: Ան ըսաւ, որ այս հաւաքը ողբալու պահ է, այլ՝ վերարժեւորման պահ է, ուղին շարունակելու առիթ է: Ժամկոչեան հաստատեց, որ Ցեղասպանութեան ժխտումը նոյնինքն Ցեղասպանութեան շարունակութիւնն է, եւ այս առումով, անընդունելի է Անգարայի մերժողական քաղաքականութիւնն ու Ցեղասպանութեան հարցը պատմաբաններուն յանձնելու մօտեցումը:

Օրուան երկրորդ պատգամը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անունով ուղղեց Ընկ. Յակոբ Կէրկէրեան, որ ըսաւ, թէ Հայ դատի հետապնդումը մեզի կը մղէ հայրենիքը ամէն բանէ վեր դասելու՝ ստեղծելու համար ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստան: Կէրկէրեան հաստատեց, որ արդէն պահը հասած է հատուցման հարցը դարձնելու ազգային ու պետական քաղաքականութեան հիմնական մէկ մասը:

Ան ըսաւ, որ Ցեղասպանութիւն մը անպատիժ ձգելով նոր ոճրագործութիւններու քաջալերանք կատարուած կ'ըլլայ: Յակոբ Կէրկէրեան հաստատեց, որ այնքան ատեն, որ թուրքը հատուցում չէ տուած, ապա կը մնայ մեր թշնամին: Ան աւելցուց, որ Հայաստանի պետութիւնը իր իրաւատէրի հանգամանքով ջատագովը պէտք է ըլլայ այս նպատակին իրականացման:

Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան անունով խօսք առաւ Գառնիկ Մկրտիչեան: Ան յայտարարեց, որ Հայոց Ցեղասպանութիւնը պատմական անժխտելի իրողութիւն է, անկախ չէ դատապարտուած տակաւին, ոճրագործը կը շարունակէ մնալ անպատիժ, մեր դատը կ'ընթանայ պահանջատիրական իր ուղիով՝ մեզ, համայն հայութիւնը ունենալով իբրեւ իր տէրը, որ հանգիստ պիտի չունենայ մինչեւ չյարգէ իր նահատակներուն կտակը եւ իր իրաւունքներուն

Շար.ք էջ 18

# ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Շաբաթ օր, Ապրիլ 23-ին, երեկոցան ժամը 7:30-ին, Թորոնթոյի ազգային երեք քաղաքական կուսակցութիւններու մասնաճիւղերուն (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ) կողմէ կազմակերպուած Ապրիլեան Եղեռնի յուշահանդէսը տեղի ունեցաւ Հայ Կեդրոնի յարակից՝ Հայ Երիտասարդական Կեդրոնի Թատերասրահին մէջ:

Հանդէսը չսկսած, երեք կուսակցական դրօշներ, քով-քովի բեմի ձախ անկիւնը կանգնած, հանդիսատեսի աչքը հաճելի պատկերով կը լեցնէին, եւ կուսակցական քայլերքներու նուագներն ալ ներկաներուն ականջը կը շոյէին:

Հանդիսութիւնը սկսաւ Գանատայի եւ Հայաստանի Քայլերգներու յտընկալս ունկնդրութեամբ, մինչ պատարի վրայ կը ցուցադրուէին երկու երկիրները խորհրդանշող պատկերներ: Ապա, մէկ վայրկեանի յտընկալս լուծութենէ ետք, երիտասարդ հանդիսավարը (Ռուբէն Ճանպազեան) Հայերէնով եւ Անգլերէնով լաւագոյն ձեւով ներկայացուց Հայկական Ցեղասպանութեան հետ առնչուող բացատրութիւններ, միտքեր ու գաղափարներ, որմէ ետք խօսք տրուեցաւ օտար անձնաւորութիւններու (մօտաւորապէս 15-20 հոգի) որոնք եկած էին ներկայացնելու Գանատայի Դաշնակցային, նահանգային, Քաղաքապետական եւ կուսակցական մարմինները:

Նման պարագաներուն, կը տարուիս հաճոյքով մտածելու, թէ այսքան երկար շարքը օտար խօսողներու, մեր համայնքի տակաւ առ տակաւ գորացող ներկայու-

թիւնն է տեղական քաղաքական կեանքէն ներս:

Հանդիսավարի հրաւերով խօսք առաւ Բաֆֆի Սարգիսեան որ ներկաներուն փոխանցեց Գանատահայութեան ուրախութիւն եւ հպարտութիւն պատճառող լուռ մը, ըստ որուն, Եղեռնէն որբացած եւ Գանատա բերուած (1923-1927) 109 Հայ որբերուն (Georgetown Boys) այժմ Cedarvale Park վերանուանուած երեմնի բնակավայր որբանոցը, որ անցեալ տարուայ Յունիս ամսուն պատմական վայր (Historical Site) նկատուած էր Halton քաղաքապետարանի կողմէ, 2011-ի Յունիսին պիտի դառնայ Ազգային վայր (National Site):

Ճագի միջազգային համբաւ վայելող, վարպետ կիթառիստ՝ Լեւոն Իշխանեան, երկու հայկական նուագի անձնական իւրայատուկ կատարողութեամբ (դաշնակի ընկերակցութեամբ իր հօր՝ Էտուարտ Իշխանեանի) հմայեց ներկաները:

Հանդէսի վերջաւորութեան տեղի ունեցաւ տեսաերիզի ցուցադրութիւն, որ խտացուած պատմական մըն էր տարբեր տեղերէ քաշուած դէպքերու եւ դէմքերու, զորս լաւագոյնս ցոյց կուտար Հայկական Ցեղասպանութեան հետ առնչուող դասախօսութիւններն եւ հաւաքները, տեղի ունեցած վերջին քանի մը տարիներուն:

Գովելի է մեր երիտասարդ սերունդի կազմակերպչական եռանդին եւ հատուածական հոգեբանութենէ ձերբազատուած արտայայտութիւնը բնորոշող սոյն հանդիսութիւնը:

Թղթակից

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՈՐՎԵԿԻԱՅՈՒՄ

Նորվեգիայում առկայ փոքր թիվ հայկական համայնքը հասցրել է ձեւաւորել սեփական աւանդույթները: Երէկ Նորվեգիայում Հայկական մշակութային կազմակերպութիւնը, որ միաւորում է Օսլոյի եւ շրջակայ բնակավայրերի հայերին, կազմակերպել էր Մուրբ Զատիկի սոնին նուիրուած միջոցառում Օսլոյից ոչ հեռու գտնուող Ասկեր քաղաքի եկեղեցում: Միջոցառումը պարունակում էր թէ մշակութային, թէ կրօնական եւ թէ ժամանցային տարրեր, այն յատկապէս ոգեւորում էր համայնքի փոքրիկ անդամներին, ովքեր խանդավառութեամբ մրցոյթի էին բռնուել գունագեղ ու նկարագրող

հաւկիթներով: Աւանդույթի համաձայն՝ այսօր տեղական ժամանակով ժամը երկուսին համայնքի անդամները այցելեցին Օսլոյի մերձակայքում, Բաներում համայնքում գտնուող Ֆրիտյոֆ Նանսենի Նախկին առանձնատան տարածք, որն այժմ գբադեցնում է Ֆրիտյոֆ Նանսենի Ինստիտուտը: Հենց այդ տան բակում է գտնուում մեծ մարդասէրի ու հայ ազգի անձնուրաց բարեկամ Նանսենի գերեզմանը, որն էլ դարձել է տեղի հայերի համար իւրովի սրբավայր եւ ցեղասպանութեան յիշատակի յուշահամալիր:

Շար.ք էջ 19

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>- Life Insurance</li> <li>- Health Insurance</li> <li>- Group &amp; Individual</li> <li>- Long Term Care</li> <li>- Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>- Estate Planning</li> <li>- Will &amp; Living Trust</li> <li>- Full Annual Review</li> <li>- Mortgage Protection</li> <li>- College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>- Workman's Compensation</li> <li>- Employee Benefits</li> <li>- Annuity</li> <li>- IRA</li> <li>- 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

# ԻՆՉՈՒՄ «ՓՈՔՐ ԱԾՈՒ» ՄՆԱՑԻՆՔ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՄԵԾ ԱԾՈՒ ԴԱՌՆԱԼ

**ՅԱՐՈՒԹՅՆՐ ԴԱԻԻԹԵԱՆ**  
(Շարունակում առաջին հոդվածի)

## Ազգասիրուբուն եւ ԱՆՃՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Յառույթ պէտք է ընդունել, որ հայ անհատը աւելի անձնասէր ու եսակեղրոն է, քան՝ ազգասէր ու հաւաքական պատկանելիութեան գիտակից: Հայ մարդու մօտ շեշտուած անձնասիրութիւնն ու գորաւոր անհատականութիւնը մէկ կողմէ նպաստած է անոր յարատեւման, բայց միւս կողմէ ալ սահմանափակած է հայրենակցին վստահելու եւ միասնական ուժերով հաւաքական նպատակներ իրագործելու ու համագալին աճ արձանագրելու կարողութիւնը: Այս յատկանիշը կը վերագրուի Հայաստանի աշխարհագրութեան, որ զարկ տուած է տոնամային մտածողութեան զարգացման, ի հեճուկս աւելի տարողունակ, համագալին մտածելակերպի զարգացման: Հաւաքական պատկանելիութեան գիտակցութիւնը ստորադասուած է ի հեճուկս հատուածական հաւատարմութեան: Այստեղ պէտք է փնտնել անցեալի նախարարական տուններէն մինչեւ ներկայի կուսակցութիւնները հասած փառասիրական եւ ուրեմն պառակտիչ վարքագծի արմատները: Երբ հատուած մը միայն իրեն կը վերապահէ ազգի առաջնորդութեան մենաշնորհը, ան դրսեւորած կ'ըլլայ եսակեղրոն վարքագիծ մը, որ ինքնաբերաբար պատճառ կը դառնայ պառակտումներու յառաջացման: Երբ հատուած մը իր հզօրացումը կը հաստատէ ի հեճուկս ուրիշ հատուածի մը ճնշման, ջլտած կ'ըլլայ ամբողջի՝ ազգի աճման ու հզօրացման գործընթացը: Մանաւանդ երբ իր հզօրացման համար կ'ապաւինի արտաքին օժանդակութեան: Այս վերջինը, իր շահին հետամուտ ըլլալով, պիտի բնականաբար օգտագործէ այդ հատուածի փառասիրութիւնները, իրականացնելու իր նպատակները, որոնք ընդհանրապէս չեն համապատասխանէր տուեալ հատուածի ազգային շահերուն: Գործիք դառնալով օտարին, կը վնասենք մեր ազգային յառաջընթացին, որ կը նշանակէ թէ ի վերջոյ կը վնասենք նաեւ մենք մեզի: Այս վարքագծի նորագոյն փաստը Հայաստանի Գ. Հանրապետութեան սեւագոյն էջը հանդիսացող Հոկտեմբեր 27, 1999ի ազգադաւ սպանդն է:

## Ժողովրդավարութիւն

Մեզ նման «փոքր ածու»ներու համար ժողովրդավար հասարակարգ եւ քաղաքացիական գիտակցութիւն ունենալը, մեր աճին ու զարգացման նպաստող յոյժ կարեւոր եւ անհրաժեշտ ազդակ մըն է: Ժողովրդավար հասարակարգերու մէջ գոյութիւն ունեցող ազատախոհ միջոցները, այն անհրաժեշտ միջավայրն է, ուր կարծիքներու ազատ քննարկմամբ կարելի կը դառնայ երկիրը յուզող զանազան հարցերուն լաւագոյն լուծումներ գտնելով նպաստելու երկրի յառաջընթացին: Դժբախտութիւնը հոն է, որ մեր մէջ տարածուած է այն համոզումը, որ անձնասէր եւ ինքնագլուխ հայերը քովքովի կարելի է բերել միայն բռնապետի մը մահակին տակ: Մենք կը համարինք անգիտանալ, որ պատմութեան մէջ երբ կարգ մը բռնապետեր յաջողութիւններու հասած

են, ապա ատոնք եղած են միայն ժամանակաւոր, ու չբացած են անոնց մահուամբ: Բռնապետութիւնը պատեհապաշտ խմբակի մը իշխանութիւնն է ամբողջ ժողովուրդին վրայ, որ կը նշանակէ թէ չի կրնար երկարատեւ եւ հաստատուն ըլլալ, որովհետեւ չի վայելէր ժողովրդային լայն խաւերու վստահութիւնը: Ժողովրդավարութիւնը սակայն, երկրի մը անկախութեան եւ գերիշխանութեան լաւագոյն երաշխիքն է: Բռնապետութիւնը, մանաւանդ սեպհական ժողովուրդի վրայ, միշտ ալ պառակտումներու, ապստամբութեանց եւ ցնցումներու դուռ բացած է, արգելք հանդիսանալով երկրի խաղաղ յառաջընթացին: Ժողովրդավարութիւնը սակայն, աւելի կայուն, հաստատուն եւ միաւորող ազդակ մը ընդհանրացած է: Այս առնչութեամբ մօտ 90 տարիներ անառջ, Հայաստանի Ա. Հանրապետութեան Ա. Վարչապետ Յովհաննէս Քաջազնունիի կատարած փառաճանաչումը նոյնքան աշխատանք է այսօր: Ան կը գրէր. «Հայաստանում չկայ ոչ մի դաս կամ շերտ, ոչ մի կուսակցութիւն կամ խմբակցութիւն, որ կարողանայ իր ուժերով ու իր վրայ յենուած՝ դիկտատուրա հաստատել: Մեր երկրում կայուն դիկտատուրա կարող է իրականացնել միայն դրսի, օտար ուժը, բայց ոչ երբեք՝ տեղականը: Մեր երկիրը կարծես ՅԱՏԿԱՊԷՍ ՍԵՆՆՈՒԱԾ է ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ընդգծումը մերն է, ՅՏԴ) եւ պակասում է մի բան միայն՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ (ընդգծումը մերն է, ՅՏԴ): Այդ մեծ պակասը դժուարացնում է իսկական ուսուցիչ կարգեր հաստատելու, բայց չի կարող յենարան դառնալ ներքին դիկտատուրայի համար»: Քաղաքական դաստիարակութիւն, այլ խօսքով՝ քաղաքացիական գիտակցութիւն:

## Քաղաքացիական Գիտակցութիւն

Ինչպէս Քաջազնունին կը նշէ, իր օրերուն մեզի պակաս է քաղաքացիական դաստիարակութիւն եւ դժբախտաբար այդ պակասը տակաւին զգալի է այսօր: Անցած այդ 9 տասնամեակներու ընթացքին, եւ մանաւանդ իր պատմութեան մեծագոյն աղէտէն հազիւ մազապուրծ հայ ժողովուրդին մէջ, փոխանակ ամրապնդելու հաւաքական պատկանելիութեան եւ միասնական ճակատագրի գիտակցութիւնը, ծաւալեցաւ հատուածական ու պառակտիչ գործունէութիւն: Փոխանակ դաստիարակելու իրարհասկացողութիւն եւ հանդուրժողականութիւն, զարկ տրուեցաւ իրարամերժ եւ ատելութեան ոգիի տարածման: Փոխանակ քաջալերելու քաղաքակիրթ երկխօսութիւն, ստեղծուեցան թշնամական ճակատներ: Փոխանակ ժողովուրդին մէջ հիմնաւորելու դրական տեսնելու եւ ընդօրինակելու կառուցողական մտածելակերպը, տարածուեցաւ չար նախանձի քանդիչ ոգին: Փոխանակ քաջալերելու ազատախոհութիւնը, գնահատուեցաւ կոյր հաւատարմութիւնը:

Նորահաս սերունդներէն անոնք որոնք գիտակցեցան այս արատներուն ու յանդիմանեցան հրապարակաւ քննադատել, հալածուեցան կամ

չհզօրացուեցան, այսպիսով գրկելով ազգը անոնց բերելիք նպաստներէն:

## Օրէնքի Գերակայութիւն

Ժողովրդավար իրաւակարգի մեծագոյն յատկանիշը օրէնքի գերակայութեան ապահովումն է, ուր ամէն ոք հաւասար է օրէնքի առջեւ եւ բոլորին իրաւունքները ամրագրուած են օրէնքով: Երբ իրաւունքը գորաւորին կը վերապահուի, ապա անտառի օրէնքը կը դառնայ գերիշխող, որ պարզ ժողովուրդէն կը հիւծէ ստեղծագործելու մարտունակութիւնն ու աւելը: Այդ մէկը նաեւ պատճառ կը դառնայ երկրի անկայունութեան, որ բնականաբար կ'արգելակէ երկրի յառաջխաղացքը: Այս իրականութիւնը նկատի ունենալով էր, որ դէպի Երուսաղէմ աքսորի ճամբուն վրայ, Պոլսոյ Իզմիրլեան Պատրիարքը կը յայտարարէր. «Հոն ուր արդմութիւն կեղծ է»: Օրէնքի գերակայութեան գործնական կիրառումը կարեւոր դեր ունեցաւ մօտ 140 տարիներ անառջ իրարմէ անջատ ու իրարու մրցակից Գերմանական իշխանութիւններէն միացեալ Գերմանիայի ստեղծման մէջ: Նշանաւոր է այն դէպքը, երբ Բրուսիոյ Ֆերտինանտ թագաւորը փորձեց յափշտակել գիւղացիի մը կալուածը, բայց տեղական դատարանը արգելք հանդիսացաւ եւ պաշտպանեց գիւղացիին իրաւունքները: Ահա այս մտայնութիւնն է, որ նպաստեց Գերմանիոյ միաւորման ու հզօր պետութիւն դառնալուն:

## Բարձր Տեսլականի Առաջնորդութիւն

Նորանկախ Հայաստանի մէջ պաշտօնավարած օտար դիւանագետի մը կը վերագրուի հետեւեալ խօսքը. «Դժուար է աշխատիլ երկրի մը մէջ, ուր ամէն առտու 3000 Նափոլէոն քունէն կ'արթնան»: Այս խօսքի մէկ տարբեր արտայայտութիւնն է ժողովրդային այն կարծիքը, թէ մեր մէջ բազմաթիւ են ժեներալները ու սակաւաթիւ՝ գի-

նուորները: Առաջին հայեացքով դրական թուացող ու առաջնորդներու առատութիւն թելադրող այս խօսքերը, դժբախտաբար այդպէս չեն: Երբ մեծ Ֆրանսա մը մէկ հատ Նափոլէոն Պոնափարթ տուած է, փոքրիկ Հայաստանի մէջ ինքզինքնին Նափոլէոն համարող 3000 անհատներու գոյութիւնը պարզապէս աղետալի է: Տարբեր խօսքով, այդ կը նշանակէ որ մենք կը տառապինք իսկական առաջնորդներու, բարձր տեսլականի տէր առաջնորդներու պակասէն, որոնց բացակայութենէն օգտուելով է, որ 3000 Նափոլէոն գլուխ կը ցցեն, խառնելով հրապարակը: Այս դառն իրականութիւնը աւելի ծանրակշիւ կը դառնայ, երբ մեր պատմութեան կը մտաբերենք թէ տեսլական ունեցող առաջնորդներու յայտնութիւնը ընդհանրապէս զուգորդուած է անոնց հալածանքով, անոնց շրջապատի «ժեներալ»ներուն կողմէ: Անոնց արժէքին անդրադարձած ենք միայն ուշացումով, պատեհ առիթները փախցնելէ ետք:

## Սօսաւոր եւ Գեռաւոր Նպատակային Ծրագրաւորում

Հային մօտ գերակայ է մօտաւոր, անմիջական արդիւնքներու հասնելու վարքագիծը, քան թէ հեռաւոր, քանի մը սերունդներու վրայ իրագործուելիք ծրագրաւորումը, որը աւելի հիմնական է համագալին յառաջխաղացքի համար: Մենք կ'ուզենք մեր կենդանութեան տեսնել եւ քաղել մեր աշխատանքի արդիւնքը: Ասիկա ճիշտ է անհատական հարթակի վրայ: Բայց միեւնոյն ատեն մենք պէտք է գիտակցինք, որ մենք հասարակ մահկանացուներ ենք, մինչ ազգը յաւերժ է: Ուրեմն որպէս մէկ մասնիկը հայ ազգին եւ գիտակից այդ հաւաքական պատկանելիութեան, մեր կեանքերը բարելաւելու առընթեր, պէտք է հեռատեսութիւնը ունենանք օժանդակելու այնպիսի ծրագրերուն, որոնց անմիջական արդիւնքը կրնանք չտեսնել, բայց որոնք կը

Շարք էջ 17

# ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆ

**Հ.Մ.Մ.ի Տիկնանց Յանձնախումբը սիրով կը հրաւիրէ ձեզ մայրերու օրուայ տօնակատարութեան առիթով**

որը տեղի պիտի ունենայ  
Կիրակի Մայիս 8, 2011 ժամը 11էն սկսեալ  
162 Palm (Նախկին Atlantis) ճաշարանին մէջ:  
162 North Sierra Madre Blvd.  
Pasadena, CA 91107

**Երգիչ ՍԱԳՕ G-ի ճոխ յայտագրով եւ անակնկալներով կ'սպասենք**

**ձեր հեռաձայնին**

**Մուտքի նուէր \$35.00**  
**(626) 497-5111 Քնար (626) 429-8366 Ծովիկ**

# ԱՂՕԹՔ ՄԵՐ ԱՆՄԵՂ ՆԱՐԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Արմաշու Դպրեվանքը Հայ Եկեղեցիին ու ազգին ընծայեց 36 նուիրեալներ որոնք նոր ոգի ներմուծեցին եկեղեցիէն ներս եւ փոխեցին անոր դիմագիծը, իրենց մէջ պահելով ուսման մակարդակի աննախընթաց որակ եւ մակարդակ, գաղափարներու ներդաշնակութիւն Օրմանեանի նման փորձառու եւ Դուրեանի նման գերագանց ուսուցչի մը անմիջական հսկողութեան ներքեւ: Անոնցմէ կարեւոր թիւ մը, ինչպէս իշեցիք, նահատակուեցան Օսմանեան թուրք պետութեան հրահանգով իրենց պաշտօններուն վրայ:

Օրմանեան ձեռնադրեց Արմաշական 14 հոգեւորականներ, 11-

### ԱՐԱՐԱՏ ՏԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՃ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԵՓԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՋԻՆ



Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցուց Ա. եւ Մ. Յովսէփիան Վարժարանը ներկայացնող Լ. կարգի աշակերտներէն երեքը մասնակցելով Արարատ Տան կազմակերպած Հայոց Պատմութեան 12րդ տարեկան զարգացման մրցումին, հանդիսացան առաջինը մրցելով այս տարի մասնակցող եօթը հայկական վարժարաններուն ներկայացուցիչ խումբերուն հետ: Յովսէփեան Վարժարանը ներկայացնող Լ. կարգի աշակերտներն էին՝ Թովփեան Մելինէն, Խաչատուր Քրիստափորը եւ Քէշիշեան Քրիստինը: Սոյն զարգացման մրցման պատրաստուելու համար աշակերտները պէտք է իւրացնեն տուեալներ հայոց պատմութենէն՝ հայ ժողովուրդի ծագումէն սկսեալ մինչեւ նորօրեայ թուականները:

Բոլորս ալ կը դիտակցինք, որ Լ. կարգի աշակերտներուն համար՝

իրենց առօրեայ դասերուն եւ արտադասարանային զբաղումներուն կողքին, երկար ժամեր խլող եւ յաւելեալ ճիգ պահանջող աշխատանք մըն է այս: Աշակերտներէն կը պահանջուի ամենայն լրջութեամբ հետեւիլ իրենց դասատուին ցուցմունքներուն, եւ մեր երեք աշակերտներն ալ՝ որոնք բոլորն ալ յառաջադէմ ու դասարանին լաւագոյն աշակերտներէն են, արդարացուցին իրենց վրայ դրուած յոյսերը եւ ապահովեցին 147 հաւանական կէտերէն 134ը: Տեղին է նշել, որ նման աշխատանքի պատրաստութեան համար անշուշտ ծնողներուն քաջալերանքին եւ օգնութեան կարիքն ալ անհրաժեշտ է: Մեր երեք աշակերտներուն ծնողները յարատեւօրէն նեցուկ կանգնեցան իրենց զաւակներուն եւ

Շար.ք էջ 15

### ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹԱԿԱՆ



Աւանդութիւն դարձաւ հայ Քոյրերու Վարժարանէն ներս, Արարատ Տան կազմակերպած Հայոց Պատմութեան՝ հարց պատասխանի մրցումին պատրաստուելն ու մասնակցիլը: Եօթներորդ դասարանի աշակերտները արդէն իսկ տարուան վերջաւորութեան կը սկսին հետաքրքրութիւն ցոյց տալ եւ առնչուիլ այս ծրագրով, որովհետեւ այս մրցումը իրենց համար հայրենի լեզուի ծրագրին մէջ ներկայացող մարտահրաւէրներէն մէկն է, որ աշակերտին կ'ապահովէ նոր փորձառութիւն:

Հետեւաբար, այս տարի եւս, Տասներկրորդ տարին ըլլալով,

Արարատ Տան Վարչութիւնը կազմակերպեց այս օգտակար եւ ուսանելի ծրագիրը, ի մի բերելով Գալիֆորնիոյ բոլոր հայկական վարժարաններու Ութերորդ կարգի աշակերտները:

Ուստի, Կիրակի Ապրիլ 10, 2011-ի չետմիջօրէին, Արարատ Տան Տէօքմէճեան սրահը կը խաչտար խոստմնալից պատանիներով: Գալիֆորնիոյ 7-ը հայկական վարժարաններէ, ութերորդ դասարաններու 28 պարման եւ պարմանուհիներ, յաղթանակի ձգուձով հաւաքուած էին հոն, առաջնութիւնը

Շար.ք էջ 15

### «ՀՐԱՆԴ ԵՒ ՄԱՆՈՒՇ ՄԻՄՈՆԵԱՆՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»



Երեք տարի է ինչ Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան հովանաւորութեամբ, անուանի լրագրող եւ հասարակական գործիչ Հրանդ Միմոնեան հիմնած է «Հրանդ եւ Մանուշ Միմոնեաններու անուան Գրական Մրցանակ»:

Ժիւրիին որոշմամբ մէկական մրցանակ կը տրուի տարուան լաւագոյն արձակագրին եւ բանաստեղծին (Սփիւք-Հայաստան-Արցախ):

2011 թուականի գրական մրցանակները տրուեցան արձակագիր՝ Զանիբեկ Զանիբեկեանին եւ բանաստեղծ Ներսէս Տ. Մեսրոպեանին (Պալաչեան):

Ապրիլ 7-ի երեկոյեան, Կլենտէյլի հանրային գրադարանին մէջ բարերար Հրանդ Միմոնեանի եւ Գրողներու Միութեան նազախահ Գրիշ Դաւթեանի ձեռամբ մրցանակներ յանձնուեցան շահողներուն:

«Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ վերոնշեալ գրողները: Մասնաւորաբար թերթիս աշխատակից Ներսէս Պալաչեանին, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

«Մասիս»

### ԱՐՈՒԵՍՏԻ ՆՈՒԱՃՈՒՄ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

«Knock Out Grafitti In glendale» Այս էր 2011 տարուան Կլենտէյլի քաղաքապետարանի կողմէ կազմակերպուած «I love My Neighborhood», «Ես կը սիրեմ Շրջապատս» տարեկան մրցոյթին խորագիրը:

Կլենտէյլի Քաղաքապետութիւնը ամէն տարի կը ձեռնարկէ գծագրութեան մրցոյթ մը ընդհանուր նիւթ ունենալով շրջապատի եւ կենսոլորտի մաքրութիւնը եւ կիզակէտ ունենալով այդ առնչութեամբ դաստիարակելու մատղաշ սերունդը, որուն համար մրցոյթին մասնակցելու կը հրաւիրուին Կլենտէյլի հանրային,



ոչ հանրային եւ հայկական բոլոր նախակրթարաններու աշակերտները գծելով՝ տարուայ պահանջուած խորագիրը արտայայտող գծագրութիւններ: Մրցոյթի աւարտին աշակերտներու գործերէն կ'ընտրուին խումբ մը լաւագոյններ «finalists» որուն համար իւրաքանչիւր դպրոցէն կ'ընտրուին միայն երկու հոգի, եւ կ'արժանանան բաժակի եւ քաջալերական նուէրներու, ապա անոնց մէջէն կ'ընտրուի առաջին երեք լաւագոյնները, որոնք կ'արժանանան յատուկ գնահատանքի, իսկ առաջին մրցանակակիրին գծած աշխատանքը կը վերածուի որմագրի եւ կը ցուցադրուի քաղաքապետարանի եւ քաղաքի այլ հանրային վայրերու մէջ ամբողջ տարի մը:

Հայ Քոյրերու Վարժարանի

նախակրթարանի աշակերտները, ամէն տարի մեծ խանդավառութեամբ եւ մեծ թիւով կը մասնակցին այս մրցոյթին, ամէն տարի ալ կ'ունենան մրցանակակիրներ՝ ընտրուած լաւագոյն աշակերտներու խումբին մէջ: Աշակերտները իրենց ուսուցչուհի՝ Վարժարանիս գծագրութեան դասատու՝ Տիկ. Մանուէլ-լա Քոսայեանի հսկողութեամբ, թելադրանքներով եւ ցուցմունքներով կ'աշխատին եւ կը փորձեն որոշուած թեման լաւագոյնս դրսեւորել իրենց արուեստի ստեղծագործութիւններուն մէջ:

Ըստ սովորութեան այս տարի եւս վարժարանէս մեծ թիւով աշակերտներ մասնակցեցան այս մրցոյթին, ընդգրկելով 3-4-5-6րդ դարի մը:

Շար.ք էջ 15

# ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼԵԱՆԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳԻՐՔԸ՝ ԱՆԳԼԵՐԷՆ

## ԳԱՅԵԱՆԷ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Երկուշաբթի կայացել է բանագիտ, բանահավաք վերժինի Սվազլեանի «Հայոց ցեղասպանության վերապրողների վկայություններ» խորագրով ստուգարածաւալ, մօտ 1000 էջանոց գրքի անգլերէն հրատարակութեան շնորհանդէսը:

Գիրքը Եղեռնից մագապուրծ 800 վերապրողների, ակնատեսների, այդ թվում՝ օտարագրի մարդկանց վկայություններ է պարունակում այդ օրհասական շրջանի ողբերգական իրադարձությունների և կոտորածների մասին:

Այս գիրքը հայերէն լոյս է տեսել 2006 թվականին, որի համար հեղինակը պետական մրցանակի է արժանացել և այդ մրցանակի հետ տրուող դրամական պարգևն էլ օգտագործել է գիրքը թրքերէն թարգմանելու և հրատարակելու համար: Այն թրքերէն հրատարակուած է թուրք այլախոհ գրող, իրաւապաշտպան Ռազմի Զարաթուրի ջանքերով:

Գրքի շնորհանդէսի ժամանակ վերժին Սվազլեանն ասում էր, որ թրքերէն թարգմանուած իր գիրքը մեծ պահանջարկ ունի թուրք երիտասարդների կողմից:

«Որովհետեւ նրանք ինֆորմացիայի կարօտ են: Նրանք դպրոցում ուրիշ բան են անցել, անցել են, որ հայերը իրենց կոտորել են, հայերը շատ վատ են և այլն, բայց երբ կարդում են, ճիշտ է, վրդովուած են, նամակներ են գրում, որ դուք ճիշտ չէք ասում և այլն: Բայց յետոյ, երբ մենք իրենց ենք ուղարկում մէջբերումներ վերապրողներից, ներողութիւն են ինդրում, ասում են՝ մենք չգիտէինք, մեզ դպրոցում ուրիշ բան են սովորեցրել», - ասում էր Սվազլեանը:

Գրքի անգլերէն թարգմանութիւնը բացի ակնատեսների յուշ-վկայություններից ամփոփում է նաև պատմական, գաղթի ու կոտորածների տարիներին ծնուած երգեր ոչ միայն հայերէն, այլ նաև թրքերէն (հայերի մեծ մասը որոշ գաւառներում թրքախօս է եղել), պատմական գրոյց-վկայություններ, պատմաբանագիտական ուսումնասիրութիւններ, քարտէզներ, Օսմանեան կայսրութիւնում իրագործուած հայերի տեղահանութեան և



ցեղասպանութեան բառարան, ծանօթագրութիւններ:

Ինչպէս պատմում էր 77-ամեայ Սվազլեանը, իր ընտանիքն էլ է անցել արեւմտահայութեանը բաժին ընկած ճանապարհով: Նա ծնունդ է ցեղասպանութիւնից մագապուրծ գրող, հասարակական գործիչ Գառնիկ Սվազլեանի ընտանիքում: Գիտնականը անձնական նախաձեռնութեամբ աւելի քան 55 տարի զբաղուել է Մեծ եղեռնը վերապրածներին և նրանց ժառանգներին փնտռելով, Հայաստանում և սփիւռքի տարբեր գաղթօճախներում վաւերագրելով նրանց յուշերը, հրատարակելով ու ներկայացնելով իր բնօրրանից դաժանաբար տեղահանուած ու ցեղասպանուած մի ողջ ժողովրդի ոչ միայն պատմութիւնը, այլեւ՝ այդ ժողովրդի ազգագրական ժառանգութիւնը: Սվազլեանը հեղինակ է Հայաստանում և արտերկրում հրատարակուած աւելի քան 20 գրքերի, հարիւրաւոր գիտական յօդուածների և ուսումնասիրութիւնների, որոնք բոլորն էլ մի ողջ ժողովրդի անցեալի պատմութիւնն են ներկայացնում:

«Ժողովուրդը այդ քաղաքական, գանգուածային ոճրագործութեան ամենամեծ վկան է, և ինչպէս ամէն մի յանցագործութիւն բացառապէս, առաջին հերթին դիմում են վկանների ցուցմունքներին, այնպէս էլ տուեալ դէպքում պէտք է անպայման յենուել ակնատես վերապրողների վկայությունների, նրանց տուած ցուցմունքների վրայ», - ասում էր Սվազլեանը:

## Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԵՓԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՋԻՆ

### Շաբաւակուած էջ 14-էն

առաւելագոյնս քաջալերեցին զիրենք:

Անշուշտ նման մրցանակներուն մասնակցութիւնն իսկ բաւարար կը սեպենք, նկատի առած որ մասնակցող աշակերտները մեր հարուստ պատմութեանն և մշակութիւնն կարեւոր գիտելիքներ կ'ամբարեն: Բայց և այնպէս մեր աշակերտները յաւելեալ պատասխանատուութիւն մը դրած էին իրենց ուսերուն վրայ, նկատի առնելով, որ նախորդ տարուան մրցանքին ալ մեր վարժարանի աշակերտները առաջնութիւնը իսլած էին, իրենք ալ ուզեցին հասնիլ այդ դիրքին. առ այդ ամենայն կորովով ու պատրաստակամութեամբ փարեցան

պատրաստութեան աշխատանքին և կրցան իրականացնել իրենց փափաքը: Սոյն աշակերտները իրենց դպրոցական առաջին տարիներուն ընթացքին արդէն ցուցաբերած էին յատուկ սէր մեր լեզուին, պատմութեան և մշակոյթին հանդէպ:

Յատուկ շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել իրենց դասատուին՝ Տիկին Լիզա Մանուգեանին, որ դպրոցական ժամերուն կողքին յաւելեալ սերտողութեան ժամեր յատկացուցած է մեր աշակերտներուն: Վարձքը կատարէ Տիկին Լիզա Մանուգեան: Մեր աշակերտներուն ալ կը շնորհաւորենք, և կը մաղթենք որ յառաջիկայ տարիներուն ընթացքին՝ իրենց երկրորդական վարժարաններէն ներսնուածն ուր յաջողութիւններ և բարձունքներ:

## ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹԱԿԱՆ

### Շաբաւակուած էջ 14-էն

խլելու վճռակամութիւնը, անոնց պարտադրած էր իրատ լրջութիւն: Ժամը 1ին բոլորը իրենց տեղերը գրաւած՝ արդէն իսկ պատրաստ էին պեղելու Հայոց Պատմութեան ոլորտները, սկսելով հին աստուածներէն մինչեւ Տրդատ թագաւոր, մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ, Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն մինչեւ պանծալի Մայիս 28... պատմութեան մութ էջերէն մինչեւ Սարգարապատ, Ղարաքիլիսէ: Անոնց ուղեղները արագ կը փոխադրուէին՝ գիրենք տանելով դարէ ի դար...

Ծնող, ուսուցիչ երկուստեք ակներեւ էր գոհունակութիւնը... Հպարտութիւն էր գիրենք դիտել, որպէս գալիք սերունդ և ապահով լով, կրծքանշաններով և իրենց վարժարաններուն տարին նիւթա-

### կան նուէրներ:

Յաջորդ օր, վարժարանիս առաւօտեան արարողութեան Հայ Քոյրերու Վարժարանի յաղթական չորս աշակերտները, նաև հոն պարգեւատրուեցան իրենց տնօրէնուհի՝ Քոյր Լուսիայի կողմէ, ոչ միայն իրենց յաղթանակին համար այլ նաև իրենց պատասխանատուութեան գիտակցութեան, բարի օրինակ դառնալով բոլոր աշակերտներուն, մասնաւանդ եօթներորդին որ յաջորդ տարուան թեկնածուն է:

Ապրիլ տղաք, կը շնորհաւորենք ձեզ: Մեզի համար ուրախութիւն էր տեսնել ձեր դէմքերու յաղթական ժպիտը: Այս պիտի ըլլայ ձեր կեանքի օրինակելի փորձառութիւններէն մէկը՝ և դառնայ ձեր կեանքի նշանաբանը՝ «Զգտիլ բարձրին և ջանալ ամէն զնով ձեռք ձգել զայն»:

## ԱՐՈՒԵՍԻՆՈՒԿՈՒՄ

### Շաբաւակուած էջ 14-էն

սարաններու աշակերտները: 9000 և աւելի մասնակցողներու գործերէն ընտրուեցան միայն 50 լաւագոյն գծանկարներ, որոնցմէ երկուքը՝ Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտուհիներէն, Երրորդ կարգէն՝ Գաթիանա Գասպարեան և վեցերորդէն՝ Տալիթա Բասմակեանն էին:

Չորեքշաբթի, Մարտ 30, 2011ին, տեղի ունեցաւ մրցանակներու բաշխման պաշտօնական հանդիսութիւնը Կլենտէյլ Սիվիլ Երկրորդ մէջ, ուր ներկայ էին ընտրուած 50 լաւագոյն գծանկարները ներկայացնողները, իրենց ծնողներով, ուսուցիչներով, վարժարանի պատասխանատուներով: Այդ օր, ներկայ էին նաև Հայ Քոյրերու Վարժարանի երկու ընտրեալները, իրենց ծնողներով և ընկերակցութեամբ ուսուցչուհիին և տնօրէնուհիին և անհամբեր կը սպասէին առաջին երեք մրցանակներու յայտարարութեան:

Վերջապէս սպասուած պահը հասաւ և առաջին երեք տեղեր գրաւող գծանկարները յայտարարուեցան, որոնց երրորդութիւնը կը խլէր Հ.Ք. Վարժարանի վեցերորդ դասարանէն՝ Տալիթա Բասմակեանը, հպարտութեամբ և ուրախութեամբ լեցնելով բոլորիս հոգիները:

Կլենտէյլի քաղաքապետութեան «Ես կը Սիրեմ Իմ Շրջապատս»

մրցոյթին 50 մրցանակակիրները Մարտ 30ի յետմիջօրէին բաժանակներ և նուէրներ առաջին երեք տեղերը գրաւողներուն ի պատիւ, իրենց անուններով ծառատունկ տեղի ունեցաւ անոնց յաճախած վարժարաններու շրջափակերէն ներս:

Տեղին է յիշել որ նախանցեալ տարիներու «Ես կը սիրեմ Շրջապատս» գծագրութեան մրցոյթներուն միշտ ալ Հայ Քոյրերու Վարժարանի ունեցած է մրցանակակիրներ՝ առաջին տասին մէջ, երկու անգամ օրէնքի բացառութիւն ընելով դատական կազմը երեք մրցանակակիրներ ունենալու իրաւունքը տուած է վարժարանիս, այսպիսով, ցարդ ունեցած ենք 2008 տարուան առաջնութիւնը, երկու տարի երրորդութիւն, և մէկ՝ չորրորդութիւն, և որպէս գնահատանք դպրոցի շրջափակէն ներս ունեցանք երկու անգամ ծառատունկ: Իսկ 2007ի քաղաքապետարանի սոյն յանձնախումբը պատուէջ նաև վարժարանիս գծագրութեան դասատուն Տիկ. Մանուէլլա Քոսայեանը իր յարատեւ և բծախնդիր աշխատանքին համար:

Շնորհաւորելի է Հայ Քոյրերու Վարժարանը, իր ունեցած ևս մէկ յաղթանակով, կը շնորհաւորենք՝ Գաթիանա Գասպարեանը, Տալիթա Բասմակեանը և իրենց ծնողները, նաև կը շնորհաւորենք վարժարանիս ուսուցչուհի Տիկ. Մանուէլլա Քոսայեանը և կը մաղթենք յաջողութիւններ և յարատեւութիւն:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
(200 ԿՈԳԻ ԸԱՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA  
**ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91107  
**Գրասենեակները վերանորոգուած և յարմար վարձքերով**  
Դետաքրքրուողներէն հեռաձայնել  
**(626) 398-0506**

### ԿԻՆՆ ՈՒ ՏՂԱՄԱՐԴԸ

(Կինը իր խնդիրները խօսելով կը լուծէ... տղամարդը՝ լուռ մնալով)

Կին արարածը վատահեղի մեքանիզմ մը ունի իր խնդիրները լուծելու, այն ալ խօսելով է: Խնդիրն մասին խօսելը կ'օգնէ իրեն՝ անոր վերնագիր տալու, բնութագրելու եւ անկէ բոլորովին ձեռքազատուելու:

Կինը իր տառապած հոգեկան ճնշումները կը պարպէ խօսքի միջոցաւ: Երբ ան դժուար կացութեան մը հանդիպի, անոր մօտ խօսքի «թագուհին» միւս «թագուհի»ներէն աւելի կը շարժի: Ինչքան տարօրինակ է այս իրակատեթիսը: Ան կը սկսի խօսելու եւ իր սրտին մէջ գտնուածները պարպելու, եւ այս միջոցին ի գուր է փորձել անոր ուշադրութիւնը դարձնել այն հարցին, թէ ինք հարցերը իրար կը խառնէ եւ կը սխալի առաջնական հարցերը սահմանելու մէջ:

Խօսքը կին արարածին համար կամուրջ մըն է, գոր կ'երկարէ ուրիշին համեմատ համար: Այս մէկը իսկապէս օգուտ կը բերէ դժուար պարագաներու ընթացքին. երբ կինը վատ վիճակներէ անցնի, ան պէտք ունի ուրիշներուն եւ անոնց հետ իր ունեցած կապերուն, եւ ան լուծման թելին մէկ ծայրը կը բռնէ շնորհիւ ուրիշին հետ իր ունեցած յարաբերութեան:

Իր ունեցած խնդիրներուն մասին խօսելը, կինը անպատշաճ վերաբերմունք չի սեպեր, այլ հանդրուան մը, գոր կ'անցնի ուրիշին հետ մտերիմ յարաբերութեան մէջ մտնելու համար: Ան նոյնիսկ իր բարեկամութեան տոկոսները կը չափէ ըստ այդ երկրորդ անձին պատմած հարցերուն բնութեամբ կամ իրենց միջեւ տեղի ունեցած խօսակցութեան խորութեամբ:

Չմոռնանք, որ կին արարածը միաժամանակ մի քանի գործեր կրնայ տեսնել. խօսած ատեն ոչինչ կ'արգիլէ անոր՝ մտածելէ: Ան ինքզինք չի գրկեր միաժամանակ թէ՛ խօսելէ եւ թէ՛ մտածելէ, որպէսզի դժուար կացութեան մէջ նոյնիսկ ան իր գաղափարները կարգաւորէ: Եթէ կնկան խօսած ժամանակ իր դիմաց գտնուող երկրորդ անձը կին է, վերջինս գիտէ ինչ պէտք է ընէ, այն ալ՝ ուշադրութեամբ եւ կարեկցութեամբ գինք մտիկ ընելն է: Իսկ եթէ երկրորդ անձը տղամարդ է, ապա շատ հաւանական է, որ ան չգիտնայ ճիշդ պահանջուած կերպով վարուիլ

այս պարագային:

Տղամարդը, երբ հոգեկան ճնշումներու ենթարկուի, կարողութիւնը ունի հարցերը իրենց հեռաւորութեամբ տեսնելու: Ան իր այս կարողութիւնը կ'օգտագործէ իր հարցերուն լուծումներ փնտռելու: Ուրեմն, անանհրաժեշտութիւն չզգար խօսելու, ո՛չ հարցը ներկայացնելու եւ ոչ ալ անոր լուծում գտնելու համար:

Այս մարդը կրնայ մտածել առանց խօսելու: Աւելին, ընդհակառակը, ճանչցուած իրողութիւն է, թէ ան միաժամանակ ուղեղային մէկ պաշտօնէ աւելի չի կրնար օգտագործել, հետեւաբար, դժուար պարագաներու ընթացքին կը տեսնենք, որ ան կը լքէ հրապարակի վրայ պէտք չունեցածները՝ պահանջուած նպատակին հասնելու համար:

Տղամարդը իր կեդրոնացումն ու միտքերը կ'ուղղէ դէպի գոյուլթիւն ունեցող հարցը. ան ինքն իր վրայ կը կողպուի, որպէսզի հոն գտնէ իր ենթարկուած ճնշումներէն ձեռքազատուելու լուծումները: Իսկ եթէ պատահի, որ կին մը փորձէ օգնել գինք, ան կրնայ ըլլալ նոյնիսկ վիրաւորական խօսքերով պատասխանէ անոր, որովհետեւ երբ այս մարդը իր ունեցած խնդիրներուն լուծում գտնելու մտածումներուն մէջ մտնէ, միակ պահանջածը առանձին ձգելն է գինք: Պահ մը երեւակայենք, որ ան իր ճակատին

«Մի՛ խանգարէք» պիտակը դրած ըլլայ, որպէսզի իր կինը, գաւակները, բարեկամներն ու գործընկերները մեծ ուշադրութեամբ հեռանան իր ճամբայէն: Ան կ'ենթադրէ, որ եթէ մարդոց ներկայութեան մնայ, անոնք օգնութեան ձեռք պիտի երկարեն իրեն, ինչ որ գինք կը մղէ փախուստ տալու, ինքզինք առանձնացնելու: Ան իր անձը կը բանտարկէ իր անձին մէջ եւ անոր վրայ դուռը կը կղպէ:

Ան ինչո՞ւ համար կարիքը չունի առատաձեռնօրէն իրեն տրամադրուած իր կնոջ, գաւակներուն կամ պաշտօնակիցին օգնութեան: Որովհետեւ, միշտ ի մտի պէտք է ունենանք, որ տղամարդը կ'ուզէ իր հարցերը անձամբ լուծել, եւ անոնց մասին խօսելը իրեն համար կը նշանակէ իր տառապանքները խոստովանիլ եւ ընդունիլ՝ իր տկարութիւնը բացի տալ մարդոց առջեւ:

### ՊԱՏԱՆԻՆ ԱՄՉԿՈՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱԽԸ

Կարգ մը պատանիներ մեծ վախ կամ ամչկոտութիւն կը զգան եթէ գտնուին անձանօթ անձերու միջեւ եւ այդ պատճառով անոնք կը դիմեն առանձնութեան եւ հեռու կը մնան ընկերային հանդիպումներէ եւ խրախճանքներէ: Այս հարցը իրենց մօտ վիճակը կը բարդացնէ, առանձնութեան պահերը կը բազմացնէ եւ ընկերային շփումներուն արգելք կը հանդիսանայ:

Հոգեբաններ կը տեսնեն, թէ ուրիշներուն ներկայութեան ընթացքին մարդ արարածին վախի մղող պատճառները կրնան յառաջացած ըլլալ իրենց մասին ուրիշներուն ունեցած կարծիքէն կամ քննադատութենէն, մասնաւորապէս եթէ պատանին կը կարօտի ինքնավստահութեան եւ ինքնագնահատանքի: Այդ պատճառները կրնան յառաջացած ըլլալ նաեւ

շփոթէ, հաւաքական մարդոց ներկայութեան վերաբերելու օրէնքներուն անգիտակից ըլլալէ եւ այս յառաջ կու գայ գիտակցութեան պակասէ եւ շրջանակի հետ շփումներու չզոյուլթենէ:

Այս վիճակը երբեմն ապացոյց կրնայ ըլլալ հիւանդագին անհատականութեան, որ հալածանքի կամ այլ մարդոցմէ նուազ ըլլալու բարդոյթէն կը տառապի, կամ կրնայ ըլլալ որ այսպիսի անձ մը կրնայ խորհիլ եւ զգալ, թէ ուրիշներ գէշութեան փոս կը փորեն իրեն համար: Այս վիճակը հոգեբանական բուժում մը անհրաժեշտ կը դարձնէ, որմէ ետք պատանին կարողութիւնը կ'ունենայ սաստիկանաբար այլ մարդոց հետ շփում ունենալու՝ ընկերային շրջանակի մէջ:

Պարզ պարագաներու ընթացքին, ոչ-հիւանդագին այսինքն,

### ՇՈՒՆՉԻ ԳԱՐՇԱՐՈՏՈՒԹԻՒՆԸ

Յաճախ կը հանդիպինք անձերու, որոնք կ'ունենան շունչի անհաճոյ եւ գարշելի հոտ: Շունչի գարշահոտութիւնը առարկայական կը կոչուի, երբ անհատ մը կը զանգատի իր շունչի գարշահոտութենէն եւ այդ կը նշմարուի նաեւ այլ անձերու կողմէ: Երբ անհատ մը ինք միայն կը զանգատի իր գարշահոտութենէն, առանց ուրիշներու նկատողութեան, երեւոյթը կ'ըլլայ ենթակայական: Կարգ մը հոգեբանական հիւանդութիւններէ տառապող հիւանդներ կ'ունենան ենթակայական գարշահոտութիւն, ինչպէս՝ զգայախաբուութենէ (hallucination) տառապող հիւանդներ, անձկալից վիճակի (anxiety state) մէջ գտնուող հիւանդներ եւ կասկածամիտ ու շարունակ իրենց մարմնական գանգան ախտանշաններէ զանգատող անձեր (hypochondriac), որոնք կը չափազանցեն եւ խոշորացոյցով կը դիտեն իրենց մարմնական շատ մը զգացումները: Այս ենթակայական գարշահոտութիւնը հազուադէպ է եւ կը դարմանուի հոգեբուժական լուրջ եւ հետեւողական միջոցառումներով:

Առարկայական գարշահոտութիւնը ընդհանրացած երեւոյթ է: Յաճախ ենթակայան ինք անձամբ չի զանգատի եւ ան կ'անդրադառնայ իր գարշահոտութեան իր շուրջը գտնուող անձերու վերաբերմունքէն եւ կամ անոնց վերջիչեցումով միայն:

Այս պարագային ենթակայան շուրջը գտնուող անձանօթներ անոր ուշադրութեան կը յանձնեն իր գարշահոտութիւնը եւ յաճախ անոնք կը զանգատին ու յանդիմանանքով կը խօսին իր հետ. ենթակայան կողակիցը եւ ընտանիքի միւս անդամները ընդհանրապէս անձանօթի մը նման չեն վերաբերիլ իր հետ, սակայն ամուսնալուծումներ տեղի ունեցած են բերնի գարշահոտութեան պատճառով:

Առարկայական գարշահոտութիւնը կը յառաջանայ հետեւեալ պատճառներով՝

- 1) Բերնին մէջ կերակուրներու մնացորդացի քացխացում: Կերակուր ուտելէ ետք բերանը մաքուր պէտք է պահել ցօղուելով եւ լուալով:
- 2) Հոտաւէտ ուտելիքներու գործածութիւն եւ սպառում, ինչպէս սխտոր, սոխ եւ կաղամբ:
- 3) Ալթոհոլի չափազանց գործածութիւն. գարշահոտութիւնը աւելի զգալի կ'ըլլայ, երբ ալթոհոլը անօթի վիճակով գործածուի:
- 4) Ծխախոտի չափազանց գործածութիւն: (Վերջին երկու պատճառներով յառաջացած գարշահոտութիւնը կարելի է դարմանել կարկարաշուրներու եւ ազատքեղի գործածութեամբ):
- 5) Ատամներու եւ լինտերու հիւանդութիւններ: Ակուաներու եւ լինտերու բորբոքումներ ու պալարներ, արուեստական ակուաններ, սխալ եւ անյարմար ակուաներու գլխարկներ, ինչպէս նաեւ ստամնաշարեր ու կամուրջներ

յաճախ պատճառ կը դառնան կերակուրի մանր կտորներու հոտ ու հոն միւրճումին, ակուաներու միջեւ եւ կամ ակուաներու եւ լինտերու միջեւ. կուտակուած կերակուրի մանր կտորները քացախանալով գարշահոտութիւն կը յառաջացնեն: Այս պարագային ակուաներու ամէնօրեայ խոզանակումը խիստ կարեւոր է: Հոտ տեղին է յիշել, որ նոյն խոզանակը երկար ատեն պէտք է գործածել. խոզանակը պէտք է նորոգել իւրաքանչիւր 3 ամիս մէկ անգամ: Ակուաները պէտք է ճշգրիտ ձեւով խոզանակուին, ինչպէս նաեւ ուտելիքները շատ լաւ պէտք է ծամուին եւ ապա ամբողջովին կլլուին: Պալարներու եւ բորբոքումներու դարմանումով բերնի գարշահոտութիւնը կ'անհետանայ: Բերնի եւ ակուաներու մաքրութեամբ եւ առողջապահութեամբ արգելք կը հանդիսանանք շունչի գարշահոտութեան:

6) Լեզուի, նշիկներու (tonsils) եւ լորձաքաբեր գեղձերու բորբոքումներ եւ պալարներ. ասոնց դարմանումով կ'անհետանայ շունչի գարշահոտութիւնը:

7) Քիթի հիւանդութիւններ՝ երկարատեւ եւ մնայուն քթաբորբ, օտար մարմիններ քիթին մէջ, քիթի պոլիպներ (polyps), քիթի եւ քթաբորբի պայանի (nasopharyngeal) քաղցկեղ, ինչպէս նաեւ երկարատեւ խորշատայ (sinusitis). ասոնց դեղորայքին եւ վիրաբուժական դարմանումով գարշահոտութիւնը կ'անհետանայ:

8) Շնչառական համակարգի հիւանդութիւններ՝ մնայուն խոչափողատայ, խոչափողի քաղցկեղ, ցնցղատայ (bronchitis), թոքատայ, թոքուռոյց (emphysema), ցնցողներու խցում, օտար մարմիններ թոքերուն մէջ եւ ծխախոտի գործածութիւն. այս բոլորին պատճառով գարշահոտութիւնը աւելի նշմարելի կ'ըլլայ արտաշնչումի ընթացքին եւ անոնց հիմնական դարմանումով գարշահոտութիւնը կ'անհետանայ:

9) Մարսողական համակարգի վերին բաժնի հիւանդութիւններ՝ ոսկորաբորբ (esofagitis), որկորային հետահոտում (esophageal reflux), որկորային քաղցկեղ, անմարսողութիւն, շատակերութիւն, ալթոհոլի չափազանց գործածութիւն. այս բոլորին պատճառով գարշահոտութիւնը աւելի զգալի կ'ըլլայ կը թալու պարագային:

10) Այլ պատճառներ եւ հիւանդութիւններ՝

- ա) Լեարդի երկարատեւ բորբոքում եւ ձախողութիւն-փճացում (liver cirrhosis). այս պարագային արտադրուած հոտը մկնահոտ կը կոչուի:
- բ) Երկամներու երկարատեւ հիւանդութիւն եւ ձախողութիւն-փճացում (uremia). այս պարագային արտադրուած հոտը մէկի հոտի կը նմանի:
- գ) Չափազանց յառաջացած շաքարախտ, որուն պատճառով թոքերու մէջ ասիթոնի (acetone) հոտ կ'արտադրուի:

նախ կը թելադրուի պատանին վարժեցնել ներկայ գտնուելու իր սիրած անձերուն հետ, որոնց շատ լաւ կը ճանչնայ եւ կը փորձէ անոնց ընկերակցութեամբ դուրս ելլել: Յաջորդ քայլը կ'ըլլայ օտար անձերու ընկերակցութիւնը,

պայմանով որ պատանին քաջալերանք ստանայ եւ ծանօթ անձեր գտնուին իր շուրջը, որոնց ներկայութիւնը հանգստութիւն կը պատճառէ իրեն եւ անոր կու տայ անհրաժեշտ քաջալերանք՝ իր ունեցած վախը շրջանցելու:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՆՇԵՑ

Շարունակում է 5-էն

Թիւն մը, որուն ներկայ էին Հայց. Առաք. Եկեղեցւոյ պատուիրակութիւնը գլխաւորութեամբ նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, որ միաժամանակ կը ներկայացնէր առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը: Ներկայ էին նաեւ ՀԱԽ-ի, ՍԴՀԿ-ի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայաստան Համահայկական Հիմնադրամի, Հայկական Համագումարի ինչպէս նաեւ այլ յարանուանութեանց եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Գերշ. Տ. Վաչէ Արք.ի բացման աղօթքէն ետք գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, որուն ընթացքին խօսք առին Փոլ Գրիգորեան, Էրիք Կարսեթի, Ռինտի Կրուէլ եւ Ալէն Մաքսուտեան: Անոնք իրենց զօրակցութիւնը յայտնեցին հայ ժողովուրդի արդար դատին, շնչտելով որ արդարութիւնը պէտք է յաղթանակէ եւ ցեղասպանու-

թեան ճանաչումը պէտք է իրականանայ նաեւ ԱՄՆ-ի կողմէ: Փակման աղօթքը կատարեց Տ. Միւռոն Մ. Վրդ. Ազնիկեան:

Ընդունելութենէն ետք ժամը 10-ին ներկաները փոխադրուեցան քաղաքապետարանի նիստերու սրահը: Օրուան ընթացիկ ժողովի առաջին մասը յատկացուած էր Հայոց Յեղասպանութեան 96րդ տարեդարձին: Սոյն միջոցառումը նախաձեռնութիւնն էր Փոլ Գրիգորեանի եւ է. Կարսեթիի: Այստեղ Քաղ. Խորհուրդի բոլոր անդամները, միաձայնութեամբ Ապրիլ 24-ը հռչակեցին Հայոց Յեղասպանութեան զոհերու օր:

Վերոյիշեալ զոյգ հանդիպումներու ընթացքին յատուկ յիշատակութեան եւ պատուի արժանացաւ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան, առ ի գնահատանք ցեղասպանութեան ուսումնասիրութեան եւ Հայոց արդար դատի ճանաչման ուղղութեամբ իր տարած աշխատանքներուն:

### ՄԻՋ-ՅԱՐԱՆՈՒԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՊԱՏԱՐԱԳ

Շարունակում է 5-էն


գիտ, մասնակցութեամբ տեղւոյս բոլոր յարանուանութիւններու առաջնորդներուն եւ հոգեւորականներուն: Օրուան պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Պատարագի կիսուն մեր նատակներու յիշատակը յաւերժացնող եւ հայ ժողովուրդի միութեան շուրջ իրենց պատգամներով ելոյթներ ունեցան Գերշ. Մուշեղ

Արք. Մարտիրոսեան, Հայ Կաթողիկէ ժողովրդապետ Գրիգոր Վրդ. Շահինեան, Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան գլխաւոր հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան եւ Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Վերոյիշեալ հոգեւորականներու եւ տանեակ մը հիւր եկեղեցականներու մասնակցութեամբ՝ պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն ի յիշատակ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

### ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 10-ՐԴ ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ



Երկուշաբթի Ապրիլի 25-ին, 2011, երեկոյեան ժամը 6:30ին Կլենտէյլի «Ալեքս» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս Մեծ Եղեռնի 96-րդ տարեդարձին առթիւ:

Քաղաքապետարանի հովանաւորութեամբ տեղի ունեցած սոյն բազմամարդ հանդիսութեան կազմակերպիչներն էին քաղաքի հայկական միացեալ մարմինի անդամները: Յուցարկուեցաւ Եղեռնի որբերու մասին կարճամեթրաժ վա-

ւերագրական ֆիլմ մը: Այս առթիւ խօսք առին քաղաքապետ Արա Նաճարեան, գոնկրէսական Ատամ Շիֆ, Ստեփան Քիւրքեճեան եւ ուրիշներ: Բոլորն ալ իրենց զօրակցութիւնը յայտնեցին հայ ժողովուրդի արդար դատին եւ պահանջեցին 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան ճանաչումը գոնկրէսին կողմէ:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ գեղարուեստական ճոխ յայտագիր:

### ԻՆՉՈՒՒ «ՓՈՔՐ ԱԾՈՒ» ՄՆԱՑԻՆՔ

Շարունակում է 7-էն

նպաստեն մեր ազգի յաւերժի երթին:

Ահաւասիկ մեր համեստ կարծիքով պարզած եղանք այն գլխաւոր ազդակները, որոնք եթէ մէկ կողմէ նպաստած են մեր յարատեւութեան, միւս կողմէ ալ պատճառ դարձած են մեր տկարութեան եւ թուաքանակի սահմանափակման: Բնականաբար կան այլ ազդակներ եւս, որոնք կամ զանց առինք նշելէ եւ կամ ալ անցողակի անդրադարձանք նշուած ազդակներու բացատրութեանց մէջ: Վստահ ենք նաեւ, որ մեր բարձրացուցած հարցերը վիճելի եւ քննարկելի շատ կողմեր ունին: Մեր նպատակը, Եղեռնի 96-ամեակի նշման այս օրերուն, մեր ընթերցողները մղել էր, որ սովորական դարձած ու յաճախակիօրէն կրկնուող «քիչէ» մտքերէն անդին անցնին եւ Ջարդի վրայ կեդրոնանալէն անդին, մտածեն մեր վտանգուած գոյերթը ամրակայելու մասին: Մանաւանդ երբ մեր աչքին առջեւ Հայաստանը ահագանգային թափով կը դատարկուի իր բնակիչներէն եւ Սփիւռքն ալ նոյնքան ահագնօրէն կ'այլասերի ու կը հիւժի: Այ՛ս պէտք է ըլլայ մեր առաջնահերթ մտահոգութիւնը եւ անոր դարձմաներ որոնելու աշխատանքը: Մեր կատարած ախտաճանաչումները եւ առաջարկած լուծումները նորութիւններ չեն: Կարդացէ՛ք Խորենացիի «Ողբը», ուր մի առ մի նշուած է թէ մեր հասարակութեան ամէն մէկ անհատը ինչպիսի՞ վարքագիծ պէտք է որդեգրէ, բարձրացնելու համար հայ ազգը իր ողբալի վիճակէն: Պատկերացնելով հանդերձ մեր դառն իրականութիւնը, որ սակաւաթիւ ու տկար ենք, ան նաեւ ցոյց կու տար անելու

եւ հզօրանալու ճամբան, հայ աշխարհի մէջ գործուած քաջութեան գործերու ընկալումով եւ գործադրութեամբ: Խորենացիի խրատներէն մինչեւ Ջարենցեան պատգամը այլեւս պէտք չէ ինչն իսկ ականջներու վրայ, այլ պէտք է շեփորուին բարձրադարձ ու քանդակուին ամէն մէկ հայի գիտակցութեան մէջ: Եթէ անշուշտ կ'ուզենք կասեցնել մեր գահավէժ ընթացքը եւ բեկումնաչին շրջադարձ մը իրագործել:

Ճիշտ է, որ մօտ հարիւրամեակ մը առաջ կրեցինք մեր պատմութեան մէջ իր նախընթացը չունեցող ահաւոր հարուած մը, որ մեզ գրեթէ բնաջինջ ըրաւ: Եղեռնի ահաւորութիւնը տակաւին կաշկանդած է մեր մտածելակերպը եւ կը քամէ մեր ներուժը, նիւթական, բարոյական եւ հոգեբանական հարստութիւնները: Բայց գիտակցինք նաեւ, որ հազարամեակներու վրայ երկարող անցեալ մը ունինք, որմէ կրնանք անգնահատելի դասեր քաղել, որոնցմէ շարք մը նշեցինք այս յօդուածով: Մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք ատոնց վրայ ու ծրագրաւորուած աշխատանքով տարածենք ու ամրապնդենք զանոնք մեր ժողովուրդի մտայնութեան մէջ: Մեր յօդուածը կ'աւարտենք աչազուրկ եւ խուլ, բայց մարդկութեան խղճի աչքերը բացող, պայծառատես Հեկէն Քելլըրի մէկ նշանաւոր խօսքով. «Երբ երջանկութեան դուռ մը կը փակուի, ուրիշ մը կը բացուի: Սակայն յաճախ մեր հայեացքը այնքան կառչած կը մնայ փակ դրան վրայ, որ չենք նշմարէր այն միւսը, որ մեզի համար բացուած է»: Այս խօսքէն դրդուած, մեր խորագրի «Ինչո՞ւ Փոքր Ածու Մնացինք» փակուած դուռը ամբողջացուցինք «Ինչպէ՞ս Մեծ Ածու Դառնալ» բացուած դուռով:

### ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ ԹՐԲԱԿԱՆ ԳԻՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ ԴԻՍԱՑ

Ապրիլ 24ին, կէսօրէ ետք ժամը 4ին մեծ մասամբ ուսանողներէ եւ երիտասարդներէ բաղկացած, հարիւրաւոր հայերու մասնակցութեամբ տեղի ունեցաւ բողոքի ցոյց մը Լոս Անճելըսի թրքական հիւպատոսարանի շէնքին առջեւ (Ուիլշըր պողոտայ):

Ս. Ջատիկուն տօնին գուգարիպող սոյն ցոյցերու մասնակիցները կը կրէին ցեղասպանութիւնը դատապարտող պահանջատիրական լրջունգներ:

Ցոյցի աւարտին տեղի ունեցաւ քաղաքական հաւաք:

Նշենք նաեւ որ Ապրիլ 21ին, նախագահ Օպամայի Լոս Անճելըս ժամանած օրը, Քըլլըր Սիթի արուարձանային քաղաքին մէջ տեղի ունեցաւ ցոյց մը, որուն կարգախօսն էր «Օպամա յարգէ խոստումը» հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու համար: Դժբախտաբար այդ խոստումը այս տարի եւս չի յարգուեցաւ հիասթափութիւն պատճառելով աշխարհասփիւռ հայութեան:

**ՄԱՍԻՍ** **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----



### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՊՈԼՍՈՅ ՄԷՉ

Շարունակում է 1-ին

կիրցներու թիւը մի քանի անգամ գերազանցած է մէկ տարի առաջ նոյն վայրին մէջ տեղի ունեցած միջոցառման մասնակիցներու թիւը:

Հաւաքուածներու անունով «այս ցաւը բոլորիս է» վերնագրով յայտարարութեամբ հանդէս եկած է Զէյնապ Թանայայ:

«24 Ապրիլ 1915-ը դարձաւ այն աղէտի մեկնակէտը, երբ պետութիւնը այս երկրին մէջ բնակող այլ ժողովուրդներու հետ գոյակցող հայ ազգի տղամարդոց, կանանց, փոքրերուն, ծերերուն զուտ այն բանի համար, որ հայ են, արմատախիլ ըրաւ այս հողերէն, որուն հետեւանքով սպաննուեցան եւ աքսորուեցան հարիւր հազարաւոր հայեր: Այդ օրուրէն ի վեր պետութիւնն ու կառավարութիւնը կը փորձեն քողարկել այդ զարհուրելի իրադարձութիւններուն ողջ էութիւնը՝ զանոնք ներկայացնելով ապստամբութեան իբրեւ ար-

դիւնք տեղի ունեցած դէպքեր: Սակայն, այդ մահուան աքսորը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկութեան դէմ իրականացուած յանցագործութիւն»,- ըսուած է յայտարարութեան մէջ:

Հաւաքի ընթացքին, Յեղապանութեան գոհերու յիշատակը ոգեկոչող խումբէն ընդամէնը քանի մը մեթր հեռաւորութեան վրայ հաւաքուած են թուրք ազգայնականները, որոնք հնչեցուցած են հակահայկական կոչեր:

Քիւրտերու, թուրք մտաւորականներու եւ իրաւապաշտպաններու կազմակերպած ոգեկոչումը փորձած են խոչընդոտել նաեւ խումբ մը ատրպէյճանցիներ եւ թուրքեր: Անոնք հակահայկական կոչեր հնչեցնելու հետ մէկտեղ աղաղակած են՝ «Օլէյ, Օկիւն Սամասթ (Հրանդ Տինքը սպաննողը):

Ոգեկոչման վայրին մօտ թուրք իրաւապահները ձեռնարկած են ապահովութեան քայլեր, որուն իբրեւ արդիւնք կարելի եղած է խուսափիլ բախումներէ:

### ԼԻԲԱՆԱՆԱՅՈՒԹԻՒՆ ԻՆ ՀԱՄԱՐՈՒՄ ՈԳԵԿՈՉԵՑ

Շարունակում է 6-ին

լիւրի չտիրանայ:

Հայկական երեք կուսակցութիւններու պատգամներէն ետք, խօսք առաւ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան: Ան ըսաւ, որ Հայոց Յեղապանութիւնը մեր պատմութեան ամէնէն դաժան եւ ամէնէն ողբերգական էջն է:

Քոչարեան իր կարգին հաստատեց, որ Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը Եղեռնի շարունակութիւնն է, եւ այս քաղաքականութեան դէմ պէտք է ցուցաբերել թոյլ վերաբերմունք:

Աշոտ Քոչարեան աւելցուց, որ պէտք է շնորհակալ ըլլալ այն պետութիւններուն, կառույցներուն ու անհատներուն, որոնք ճանչցան Հայոց Յեղապանութիւնը: Ան կոչ ուղղեց շարունակելու նահատակնե-

րուն պատգամը՝ ծառայելով մեր ազգային ու համամարդկային արժէքներուն: Ան ըսաւ, որ պէտք է յաղթահարել արդի աշխարհի բոլոր մարտահրաւէրները՝ միասնականութեամբ եւ համերաշխութեամբ:

Հայոց Յեղապանութեան պաշտօնական հանդիսութեան աւարտին իր հայրապետական պատգամը ուղղեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս, որ ըսաւ, թէ Ապրիլ 24-ը մեր ժողովուրդին համար այլ լեւա սոսկ մեր նահատակները չի չլուօր չէ, այլ նահատակներու նուիրական կտակին նկատմամբ մեր ունեցած յանձնառութեան հաշուետուութեան եւ վերահաստատման օրն է:

Հայոց Յեղապանութեան 96-ամեակի հանդիսութիւնը փակեցաւ Հ.Մ.Մ.ի փողերախումբին կատարողութեամբ «Սարդա-րապատ» յաղթերգով:

### ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱՆ ԴԱՐՁԵԱԼ ԽՕՍԵՑԱՒ

Շարունակում է 1-ին

յերը մեծ աւանդ ունին ու անոնցմէ շատերը Մեծ Եղեռնէն փրկուածներու սերունդներն են:

Պաշտօնական Անգարան Միացեալ Նահանգներու նախագահի յայտարարութիւնը որակեց «միակողմանի»:

«Յայտարարութիւնը կ'աղա-

ւաղէ պատմական փաստերը: Հետեւաբար, մենք այդ կը նկատենք շատ խնդրալարող եւ խորապէս կ'ախտասնք այդ կապակցութեամբ: Միակողմանի յայտարարութիւնները կը խոչընդոտեն ճշմարտութեան ըմբռնումը», - ըսուած է Ապրիլ 24-ին Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հրապարակած յայտարարութեան մէջ:

### Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՆՄԱՐԱՆԸ

Շարունակում է 13-ին

ը Արմաշի մէջ եւ 3-ը Կ. Պոլսոյ մէջ իր պատրիարքութեան շրջանին: Դուրեան ձեռնադրեց նոյնպէս 14 շրջանաւարտներ, 10-ը Արմաշ եղած միջոցին, եւ 4-ը Ձմիւռնիայէն յատկապէս Արմաշ գալով, ուր մեկնած էր որպէս Առաջնորդ: Յաջորդ 6 շրջանաւարտները ձեռնադրուեցան Նիկոմիդիոյ Առաջնորդ Ստեփաննոս Եպս. Յովակիմեանէ, եւ վերջին 2-ը, 1915-ին լրիւ դասարանով իրենց վերջին վերատեսուչին Մեսրոպ Եպս. Նարոյեանի հետ Դպրեվանքին աքսորուած, ձեռնադրութիւն ստացան Նարոյեանէ Կ. Պոլսոյ պատրիարքութեան Մայր Եկեղեցիին մէջ՝ տնօրինութեամբը Զաւէն Պատրիարք Տ. Եղիայեանի:

Երուսաղէմ Եղիշէ Դուրեան եւ Թորոնթոյ Գուշակեան Պատրիարքներով, Անթիլիաս Բաբգէն Կիւլէ-սէրեան Աթոռակից Կաթողիկոսով եւ Շահէ Արքեպս. Գասպարեան Դպրեվանքի որպէս վերատեսուչ, Փառէն Եպս. Մէլքոնեան ուսուցիչ Դպրեվանքին, շարունակեցին Արմաշի վսեմ գործը, ընծայելով երկու Աթոռներէն ներս շարք մը հոգեւորականներ որոնք եղան անցեալ ճակատագրական դարու մեր հոգեւոր առաջնորդներն ու ռահ-վիրաները:

#### Զոյգ Հաստատութեանց Աւանդը

Գէորգեան ձեմարանի սաները յատկանշուեցան որպէս կրօնքի եւ քրիստոնէական արուեստի ախոյեաններ որոնք զուգահեռաբար հայ մատենագրութիւնն ու բանասիր-

րութիւնը շարունակեցին Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ: Հայագէտ, ուսումնասէր եւ արուեստաբան, երաժշտագէտ ու ձեռագրագէտ հոգեւորականներ եղան անոնք որոնք պայծառացուցին Մայր Աթոռի դիմագիծը, պահպանեցին հայ եկեղեցւոյ հնաւանդ հիմքը ու ինքնութիւնը իր բազմերես դրսեւորումներով: Ներկայ ժամանակներու Հայ Եկեղեցին շատ բան կը պարտի անոնց իրենց մատուցած անձնդիր եւ նուիրեալ աշխատանքին համար, նիւթականէն շատ հեռու եւ շատ բարձր, եւ հոգեւորական կեանքին շատ մօտիկ եւ հոգածու, որուն արգասիքը մեր օրերու եկեղեցականներս կը վայելենք, յաճախ առանց անդրադառնալու այդ աւանդին ու անոր արժէքին:

Արմաշու Դպրեվանքը ինքնին անկրկնելի դպրոց մը հաստատեց մեր մօտիկ անցեալի հայ եկեղեցական կեանքին մէջ: Աստուածաբանութիւնն ու ծէսը հիմնովին վերականգնանցան Հայ Եկեղեցւոյ քննական պատմութեան խորքով, մատենագրութեամբ եւ արեւմտեան որակաւոր խորքով: Արմաշականներ միօրինակութեան եւ հարազատութեան նախաձեռնողները հանդիսացան որոնց կրօնագիտութիւնն ու վարչագիտութիւնը թողած են մեր մէջ իրենց մնայուն կնիքը: Իցիւ թէ ներկայ հոգեւորականութիւնը բարի վերադարձով մը Արմաշի թողած աւանդը չափով մը զարգացնէր թեմերէն ներս, հեռու մնալով հապճեպ եւ մակերեսային մօտեցումներէ:

**ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ**  
Ուրախութեամբ կ'իմանանք որ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Աննա Կիզիրեան բախտաւորուած են երկրորդ մանչ զաւակով մը եւ անուանած Հրակ:  
Մեր խնդակցութիւնները բախտաւոր ծնողաց եւ իրենց հարազատներուն, մաղթելով երջանիկ տարիներ:

**ԱՊԱՔԻՆԱՆ ՄԱՐԹԱՆԸ**  
Մեր աշխատակիցներէն՝ ծանօթ գրող Սարգիս Վահագն, վերջերս ունեցած է սրտի տագնապ մը: Այժմ տուն վերադարձած ըլլալով կը բոլորէ իր ապաքինման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:

**Burbank Airport**  
**Bid Request General Contractors**  
Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E11-08, Module 12.9 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, May 25, 2011. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Thirty (30) Single Family Residences. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for May 5, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7549)**  
**FINANCIAL ADVISORY SERVICES**  
The Housing Authority of the City of Los Angeles ("the Authority") invites proposals from qualified financial consulting/advisory firms to provide financial advisory services related to the development, redevelopment and repositioning of scattered-site public housing, either owned by the Authority, or in which it has an interest, in order to maximize returns on its asset investments. Copies of the RFP may be obtained beginning April 18, 2011 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057 until 2:00 P.M., May 23, 2011.  
4/28, 5/5/11  
CNS-2083128#  
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7545)**  
**FURTHER INVESTIGATION, ASSESSMENT & DEVELOPMENT OF REMEDIAL ACTION PLAN FOR 9901 SOUTH ALAMEDA ST. IN THE COUNTY OF LOS ANGELES**  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified Consultants to further investigate, assess and develop a feasibility study, health risk assessment and remedial action plan under the direction of the California Department of Toxic Substances Control for 9901 South Alameda Street in the County of Los Angeles ("Service"). Copies of the RFP may be obtained beginning April 11, 2011 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., May 13, 2011.  
4/21, 4/28/11  
CNS-2077571#  
MASSIS WEEKLY

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՈՐՎԵԿԻԱՅՈՒՄ

Շարունակում է 6-էն

Համայնքի անդամները իրենց փոքրիկների հետ ծաղիկներ դրեցին մեծ նորվեգացու շիրիմին ու իրականացրեցին մոմավառութիւն: Նորվեգիայի Հայկական Մշակութային կազմակերպութեան նախագահու թեան անդամ Լիլիթ Մկրտչեանը չիշատակման ելոյթ

քելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ քահանայի կողմից մատուցուող պատարագով: Այդպիսով, Շուեդիայում հայկական եկեղեցին սպասարկող հոգեւորականների խումբը նաեւ կը սպասարկի Նորվեգիայի հայ համայնքին:

Նորվեգիայի հայկական համայնքը տարբերում է Եւրոպայի դասական հայկական համայնքնե-



Մաղիկներ ու մոմավառութիւն Ֆրիտյոֆ Նանսենի շիրիմին

րնթերցեց, որից չետոյ մի քանի անդամներ եւս երախտիքի խօսքեր ասացին ուղղուած Ֆրիտյոֆ Նանսենին, այնուհետեւ ներկաները երգեցին Հայաստանի հանրապետութեան օրհներգը եւ ծածանեցին Հայաստանի եւ Նորվեգիայի դրօշները:

Յիշատակի միջոցառումը

րից, քանի որ այն համեմատաբար փոքրաթիւ ու նոր համայնք է: Այստեղ, ի տարբերութիւն Ֆրանսայի, Գերմանիայի, Հոլանդիայի, չկան հայերի երկրորդ եւ երրորդ սերունդներ: Համայնքը հիմնականում բաղկացած է Միջին Արեւելքից ոչ շատ ուշ անցեալում ներգաղթած հայերով: Հայերը սիրուած



Ֆրիտյոֆ Նանսենի նախկին առանձնատունը

աւարտուեց Նանսենի տան բակում կազմակերպուած հիւրասիրութեամբ: Հաւաքուածները քննարկեցին համայնքին յուզող խնդիրները:

Նշուեց, որ համայնքի ինդրամբողջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը որոշում է ընդունել պաշտօնապէս հիմնել Հայկական Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայութիւնը Նորվեգիայում, որը կը կազմակերպուի ս.թ. Ապրիլի 29-ին Շուեդիայում Հայկական Առա-

ն Նորվեգիայի տարբեր մարզերով: Իրենց թուաքանակից եւ ակտիւութեամբ հիմնականում աչքի են ընկնում Օսլոյի եւ շրջակայ բնակավայրերի, Բերգենի, Ստավանգերի եւ Ալեսունդի մեր հայրենակիցները:

Նորվեգիայում մեծութեամբ երկրորդը համարուող Բերգեն քաղաքում կայ նաեւ Ֆրիտյոֆ Նանսենին նուիրուած եւ Հայոց Ցեղասպանութիւնը ոգեկոչող խաչքար,

### ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Ազգային բարերար Տիար Բիւզանդ Մարգարեանի մահուան տիտուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան, Կեդրոնական Վարչութիւնը ներկայովս կու գայ յանուն բոլոր կիլիկեանցիներուն, իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, հարազատներուն եւ բարեկամներուն, ինչպէս նաեւ Հայաստանի նոր Այնթապ աւանի «Բիւզանդ Մարգարեան» վարժարանի պատասխանատուներուն ուսուցչական կազմին, աշակերտութեան եւ ծնողաց, Երեւանի Այնթապցիներու Միութեան վարչութեան, եւ Լոս Անձեւելսի Այնթապցիներուն Մշակութային Միութեան վարչութեան:

Պրն. Մարգարեան եղաւ տիպար ազգային անձնաւորութիւն մը, մեծ հայրենասէր մը, միշտ քաջալեր հանդիսացաւ մեր վարժարաններուն եւ Մշակութային Միութիւններուն:

Անոր բազում ծառայութիւնները մեծապէս գնահատուեցան, Հայկական Կիլիկեան վարժարաններու հիմնադրութեան 85 ամեակի շքեղ հանդիսութեան ընթացքին, երբ անոր շնորհուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի սրբատառ կոնդակը եւ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանը, ձեռամբ թեմիս բարեջան առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, նոյն առիթով նաեւ Լոս Անձեւելսի Այնթապցիներու Մշակութային վարչութիւնը գինք պարգեւատրեց Միութեան ոսկէ մետալով:

Թող ամենակալ տէրը անոր հոգին երկնքի արքայութեան արժանի ընէ:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

որը տեղադրուել է 2007թ. Ապրիլին:

Հայկական մշակութային կազմակերպութիւնը եւս ծրագրում է նման խաչքար-յուշակոթող տեղադրել Օսլոյի տարածքում: Ցաւօք, սակայն, նման յուշակոթող Նանսենի առանձնատան տարածքում տեղադրելու մասին հայերի դիմումը մերժուել է, քանի որ այդ տարածքը գտնուում է տեղական իշխանութիւնների յատուկ վերահսկողութեան տակ, եւ որոշում կայ այդ տարածքը պահպանել իր բնական տեսքով, առանց նոր չաւելումների կամ փոփոխութիւնների:

2008 թուականին Նորվեգիայի հայկական համայնքից Կայծակ Դեմիրճեանի, Խտալիայի համայնքից Պիետրո Կուչուկեանի եւ այլոց նովանաւորութեամբ Նանսենի գերեզմանից մասունքներ տեղափոխուեցին Հայաստան, եւ Նանսենին նուիրուած յուշքար գետեղուեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում, չիշողութեան պատին:

Ֆրիտյոֆ Նանսենը առաջին համաշխարհային պատերազմից չետոյ նշանակուել էր Ազգելի լիգայի փախստականների հարցերով յանձնակատար: Նրան էր յանձնարարուած մեծ պատերազմի արգիւն-

քում փախստական ու անհայրենիք դարձած միլիոնաւոր մարդկանց վերաբնակեցումը: Նանսենի կողմից ստեղծուած Նանսենեան անձնագրերի օգնութեամբ միլիոնաւոր փախստականներ անձը հաստատող փաստաթուղթ եւ վերաբնակեցման իրաւունք ստացան, այդ թւում նաեւ երեք հարիւր հազարից աւելի հայեր: Նանսենը յատկապէս անհանգստացած էր հայերի ճակատագրով: Նա քանիցս այցելել է Հայաստանը եւ գրքեր հրատարակել Հայաստանի մասին: Օրինակ, 1916-ին Նանսենը գրում է, «Ոճրագործութիւնը, որ սկսուեց 1915-ին չի կարող համեմատուել մարդկութեան պատմութեան ոչ մի դրուագի հետ: Աբղուլ Համիդի կողմից իրականացուած ջարդերն անգամ ոչինչ են համեմատած նրա հետ, թէ ինչ արեցին այսօրուայ թուրքերը»: Նա իր քաղաքական եւ հասարակական կեանքի ողջ ընթացքում նուիրուած մնաց հայկական հարցին համար պայքարին եւ նրա դատեր հաւաստմամբ, նոյնիսկ մահուան ակնթարթից առաջ նրա վերջին բառը «հայ» էր:

ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ Օսլո, Նորվեգիա

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

#### PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱՎԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ԱՇԽԱՏՈՂ ԿՈՒՉՈՒԻ

Փասատիւնայի մէջ հայկական հաստատութիւն մը կարիքն ունի տնային պայմաններով՝ ՀԻՆ ԳԻՐՔԵՆԻ ՆՈՐՈԳՈՂԻ մը (վերաբուժի լաւ պայմաններ): (626) 354-5924 (Վաեէ)

### ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ԱՊՐԻԼ 24, 2011



## AMERICAN RELIABLE WINDOWS



[www.americanreliablewindows.com](http://www.americanreliablewindows.com)

**\$89** Rebate\*  
toward the price of new Vinyl Windows  
Rebate Example:  
5 windows = \$445  
10 windows = \$890  
15 windows = \$1335



Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

*Beautify while increasing the value of your home with elegant,*

**18 months no interest\*** Financing O.A.C

**ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**



Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

***Our Windows Qualify For Tax Credits***

Manufacturers rebates & deep discounts available NOW.  
Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**

*Your Satisfaction is Guaranteed.*



Licensed • Certified • Insured CSLB LIC#901591